20590

2002

373
उ-89

1911

2 010

ԾՐԱԳԻՐ

Ն.—ՋՈՒՂԱՑԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, Գ. ՔԱՆԱՆԵԱՆ
ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ.

Վաւերացուած նոյն դպրոցների
Հոգաբարձութեան եւ Մանկվ. խորհրդի
կողմից,
1910—1911 ուսումն. տարում.

373
Ծ-89

1911
Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ
ՋՈՒՂԱ—ՍՊԱՀԱՆ

373
Ծ-89

Ձեռագրի իրաւունքով

ԾՐԱԳԻՐ

Ն.—ՋՈՒՂԱՑԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, Գ. ՔԱՆԱՆԵԱՆ
ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ.

2002

Վաւերացուած նոյն դպրոցների
Հոգաբարձութեան եւ Մանկվ. Խորհրդի
կողմից,
1910—1911 ուսումն. տարում.

1911
ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԻ ՎԱՆՔԻ
ՋՈՒՂԱ—ՍՊԱՀԱՆ

8363

37559

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Դպրոցական հաստատուն ու մշտական ծրագրի անհրաժեշտությունը ակնայտ է դպրոցական գործին քիչ թե շատ ծանօթ իւրաքանչիւր անձի համար։ Հայ դպրոցի կրթական վիճակի անկերպարան դրութեան գլխաւոր պատճառներից մէկն էլ հաստատուն և որոշ ծրագրի չգոյութիւնն է։ Լաւագոյն է, մեր կարծիքով, ունենալ նոյնիսկ թերի ու պակասաւոր մի ծրագիր, քան թէ անթերի ու իդէալական ծրագրի մշակման դժուարութիւններից ընկճուած՝ մնալ առանց ծրագրի և յոյս դնել միայն ուսուցիչների հմտութեան ու բարեխղճութեան վրայ, որոնք դեռևս բաւական չեն դպրոցական գործի նորմալ յառաջադիմութեան համար։

Բնաւ յաւակնութիւն չունինք կարծելու, որ ծրագիրս զերծ է թերութիւններից, որոնք անխուսափելի են՝ ի նկատի ունենալով այն մի քանի աննպաստ հանգամանքները, որոնց մէջ սա մշակուեց ու ձևաւորուեց։ Վստահ ենք սակայն, որ ժամանակի ընթացքում հնարաւոր պիտի լինի աւելի ևս մշակել ու ճոխացնել՝ օգտուելով դպրոցական գործին ծանօթ անձերի և ուսուցիչների ցուցմունքներից։ Այս նկատումով արուած ամեն մի բարեմիտ դիտողութիւն շնորհակալութեամբ պիտի լսենք։

Ծրագիրս մշակելիս անհրաժեշտօրէն ի նկատի ենք առել նաև տեղական հանգամանքները։

Այսպէս՝ քանի որ դպրոցն աւարտող աշակերտներից շատերը գնում են Հնդկաստան՝ ուսումը շարունակելու, կամ որևէ գործ փնտրելու, այդ պատճառով մեծ տեղ ենք տուել անգլերէնին և նոյնիսկ ծրագրել ենք մի քանի առարկաներ բարձրագոյն դասարաններում անցնել անգլերէն լեզուով (աղգերբա, երկրաչափութիւն, Անգլիայի պատմութիւն հայկ.)։ Երկրորդ՝ ի նկատի ունենալով որ չրջակայ Փերիա, Զահար-Մահալ, Քեազազ և ուրիշ գաւառների աւելի քան 100 հայաբնակ գիւղերի համար ուսուցիչներ և վարժուհիներ պատրաստելու գլխաւոր պարտականութիւնը ընկնում է մեր դպրոցների վրայ՝ ծրագրուած է 6-րդ դասարանում անցնել նաև մանկավարժութիւն ևս։

Առարկաների չափի և սիստեմի մասին այսքանը միայն անհրաժեշտ ենք համարում ասել, որ աշխատել ենք նիւթերը այնպէս դասաւորել և այն սիստեմով, որ գոնէ մօտիկ ապագայում հընարաւոր լինի գործադրել։ Այսպէս՝ քաղաքական աշխարհագրութիւնը ծրագրուած է անցնել մայրցամաքների ու պետութիւնների աւանդական սիստեմով, քանիոր ովկիանոսային-ջրային սիստեմը դեռևս կարօտ է հիմնաւորման ու պարզաբանման և որի համեմատ դեռ ոչ մի դասագիրք չկայ մշակուած հայերէն լեզուով։ Բնական պատմութիւնը և մի քանի ուրիշ առարկաներ ցանկալի կը լինէր անցնել կոնցենտրիկ սիստեմով, բայց վաղաժամ ենք համարել դարձեալ նոյն նկատումներով։

Ցիշենք նաև, որ աւելորդ խճողում առաջ չբերելու համար՝ աւելորդ ենք համարել դնել դիդակտիկական ու մեթոդական տեսութիւններ։ Այս պակասը լրացնելու համար դասատուներին կարող ենք յանձնարարել Բուդէի «Մեթոդիկա»ն և Կովկ. հայ. ծխ. դպրոցների ծրագրի տեսական հիմնաւորման բաժինները։

Պարտք ենք համարում յայտնել նաև, որ ծրագիրս կազմելիս օգտուել ենք Կովկ. հայ. ծխ. դպրոցների ծրագրից, որից որոշ մաս վերցրել ենք նոյնութեամբ, որոշ մաս՝ փոփոխելով։

1910—1911 ուսումն. տարուայ մանկավարժական ժողովներում մշակուած սոյն ծրագիրը հաստատուած է Պարսկա—Հնդկաստանի թեմի Սրբազան Առաջնորդ Գերապատիւ Տ. Սահակ արքեպ. Այվազեանի, դպրոցներիս պատուաւոր Հոգաբարձութեան ու Մանկվ. Խորհրդի կողմից։

Ա. ԳԵՐԱՍԻՄԵԱՆ՝

Տեսուչ Զուղայի ազգ. երկսեռ դպրոցների։

Յուլիս, 1911 թ.

Զուղա—Սպահան.

Մանկավարժական Խորհրդի կողմից՝ նախակրթական երեք բաժանմունքների և ուսումնարանական վեց դասարանների համար կազմուած սոյն ծրագիրը՝ ըստ որոշման Հոգաբարձական ժողովոյ հաստատելով յանձնարարեմք դպրոցների ընդհանուր Տեսչութեանն ի գործադրութիւն։

ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊՍ. ԱՅՎԱՏԵԱՆ՝
Թեմական Պարսկա-Հնդկաստանի.

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ (2 ժամ)

ա) Աղօթք։ Խաչակնքել. Տէրունական աղօթք։

բ) Նոր ուխտից: Յիսուսի երկրաւոր կեանքի համառօտ ու ամփոփ նկարագրութիւն։ 1. Ծնունդ. 2. Ընծայումն Տաճարին. 3. Մկրտութիւն. 4. Ոտնալուայ. 5. Խաչելութիւն. 6. Թաղումն. 7. Յարութիւն. 8. Համբարձումն։

գ) Բարոյախօսական առակներ ու պատմուածքներ (6-10 հատ)։

ՀԱՅԵՐԷՆ (6 ժամ)

1. Կարդալ-պատմել։

Հնչական եղանակով և «նախ գրելու, ապա կարդալու» սիստեմով աշակերտները պէտք է սովորեն ամբողջ այբուբենի տառերը գրել ու կարդալ։ Պէտք է անցնեն գլխատառերը և վարժ կերպով կարդան բառերն ու նախադասութիւնները. վերջում նաև՝ փոքրիկ յօդուածներ։ Անգիր անել

5—6 կարճ ոտանաւոր։ Աշակերտները պիտի կարողանան սովորած յօդուածը հարցերով և երբեմն առանց հարցերի պատմել։

2. Քերակ. գիտելիքներ։

1. Ճանաչել տրոհութեան և առոգանութեան նշանները։

2. Ձայնաւոր ու բաղաձայն գրեր։

3. Գրաւոր։

Հասարակ ու գլխագիր տառերը կանոնաւոր գրել։ Արտագրել բառեր ու կարճ նախադասութիւններ։ Ինչ որ դասագրքից սովորում են կարդալ, նոյնը անպայման պիտի արտագրեն։

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ (5 ժամ)

Համարել 1—20՝ մէկ-մէկ, երկու-երկու, երեք-երեք և այլն՝ բարձրանալով ու իջնելով։ Բանաւոր և գրաւոր վարժութիւններ ու խնդիրներ՝ 20-ի սահմանում։ Զորս գործողութիւններից սկզբում պիտի անցնել գումարումն ու հանումը, իսկ վերջում՝ բազմապատկումն ու բաժանումը՝ լացատրելով վերջիններս իբրև գումարման ու հանման համառօտ ձևեր։—Դաղափար տալ $^1/_2$-ի և $^1/_4$-ի

մասին։— Անուանական թուերից անցնել՝ սաժէն, արշին, վերշոկ. ամիս, շաբաթ, օր։

ԻՐԱՎՆՈՒԹԻՒՆ (2 ժամ)

1. Դասարան։ 2. Դասարանում գտնուող իրերը։ 3. Աջ, ձախ. վերև, ներքև. առջև, ետև։ 4. Բաց, պարտէզ. սահման։ 5. Արև, լոյս, ստուեր, արևի ծագելն ու մայր մտնելը. առաւօտ, կէսօր, երեկոյ, գիշեր, կէս գիշեր։ 6. Արևելք, արևմուտք, հարաւ և հիւսիս։ 7. Տարուայ եղանակները. ամիսները. շաբաթուայ օրերը. օրուայ ժամերը. ժամացոյց։ 8. Աստղեր. լուսին. ծնունդ լուսնի. կիսալուսին, լրումն լուսնի։ 9. Ամպեր, ծիածան, որոտումն, փայլակ, կայծակ, քամի, փոթորիկ։ 10. Գոլորշի. ցող. եղեամն. անձրև. ձիւն. կարկուտ. սառոյց։ 11. Դպրոց. փողոց. տուն։ 12. Այգեքաղ. գիւղագործութիւն. դաշտային աշխատանք։ 13. Աղբիւր, առու, գետ, գետափ. կամուրջ. ջրաղաց։ 14. Դաշտ, բլուր, սար, հովիտ և ձոր։

ՆԿԱՐԱԶՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Նկարել ուղիղ գծեր՝ ուղղահայեաց, հորիզոնական ու թեք։ Զուգահեռական գծեր։

Ուղիղ, բութ և սուր անկիւններ։— Ձևեր՝ եռանկիւններ, քառանկիւններից՝ ուղղանկիւնի, քառակուսի, ռոմբ։— Կանոնաւոր բազմանկիւնիներ։— Կոր գծեր. շրջան, տրամագիծ, շառաւիղ։ Ընդօրինակել գրատախտակից ուսուցչի նկարած հարթ օրնամենտները։— Բնականից նկարել մի քանի պարզ առարկաներ (գիրք, շրջանակ. պայտ, օղակ. խնձոր, գնդակ և այլն)։

ՁԵՌԱԳՈՐԾ (2 ժամ)

Շերտիկ գործել՝ երկու ճաղով. երեսի աջ հատ գցել. շուռ տուած հատ գցել. հատ պակսեցնել. հատ աւելացնել. կտրել։

Գործադրութիւն։ Գուլպայի կապ, սրբունքակապ գործել. բաղնիսի լիֆ։

Գուլպայ։ Գուլպայի ուղիղ բուկ. գուլպայի վիզը (թարս և ուղիղ). գուլպայի պակսեցնելը, աւելացնելը, կրունկ, թաթ և կտրելը։

Գործադրութիւն։ Մանկական գուլպայ. թևնոցներ։

Հաշիա։ Հաշիա՝ չանգալով. շղթայ. անթել սիւն. թելով սիւն. աչք (ծակ). ամենապարզ բուրջ (եզր). ցանցագործ։

Գործադրութիւն։ Մի արշին հաշիա՝ զա-

նազան ձևերի և ձեռագործի ցանցագործ քսակ։

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ (1 ժամ)

Պարզ ֆրազների (երաժշտ.) և ապա երգերի միջոցով նպաստել աշակերտի լսողութեան, երաժշտական յիշողութեան ու րիթմի զգացման զարգացմանը։

Սովորել 6—8 մանկական պարզ երգեր (եւրոպական մոտիւներով։

Ծան.— Ա. կիսամեակում ուսուցիչն է միայն չափ տալիս, իսկ երկրորդ կիսամեակից՝ աշակերտներն էլ։

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ (1 ժամ)

1. Կանգնել և կանգնած տեղը ազատ վարժութիւններ՝ բազուկների, գլխի, սրունքների։

2. Քայլընթացք զանազան ձևերով։

3. Ոստնել, ցատկել և այն։

ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Ընթերցանութեան դասագրքից և ուսուցչի տուած օրինակներից առնուած փոքրիկ կտորներ ընդօրինակել՝ ուշադրութիւն դարձնելով գեղեցիկ գրութեան, համաչափութեան ու մաքրութեան վրայ։— Գեղագրութիւնը երեխայի մէջ պիտի զարգացնէ գեղեցիկի ու վայելուչի զգացում։

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ (2 ժամ)

ՀԻՆ ՈՒԽՏԻՑ՝ Նահապետներ—

ա) Աբրահամ. 1. Աստուած կանչում է Աբրահամին. 2. Աբրահամը և Ղովտը բաժանւում են. 3. Աբրահամն ազատում է Ղովտին. 4. Իսահակի ծնունդը։ բ) Իսահակ. 5. Իսահակի ամուսնութիւնը և Աբրահամի մահը. 6 Եսաւ և Յակովբ. 7. Յակովբի խաբեբայութիւնը։ գ) Յակովբ. 8. Յակովբի փախուստը. 9. Յակովբը Լաբանի մօտ. 10. Յակովբի դարձը Խառանից. 11. Եսաւի և Յակովբի հաշտութիւնը։ դ) Յովսէփ. 12. Յովսէփի եղբայրները և նրա վաճառումը. 13. Յովսէփը Պետափրէսի տանը (առանց գայթակղութեան պատմութեան). 14. Յովսէփի բարձրանալը. 15. Յովսէփի եղբայրները գալիս են Եգիպտոս. 16. Յովսէփը յայտնւում է եղբայրներին. 17. Յակովբը Եգիպտոսում. 19. Յակովբի մահը։

ՆՈՐ ՈՒԽՏԻՑ՝ Առակներ—

1. Կոյսերի առակը. 2. Անառակ որդու

առակը. 3. Ակրմնացանի առակը. 4. Քանքարների առակը։

ՀԱՅԵՐԷՆ (6 ժամ)

1. Կարդալ-պատմել։

Կարդալ դասագրքի հատուածները առանց նախավարժութիւնների, առանց շտապելու և արտայայտիչ առոգանութեամբ։ Կարդացած յօդուածի բովանդակութիւնը պատմել։ Անգիր անել 8—10 դիւրըմբռնելի ոտանաւոր։

2. Քերական. գիտելիքներ։

Հարցերով վերլուծել նախադասութիւնները՝ առանց տերմինների։— Երկբարբառներ։— Գլխատառի գործածութեան գլխաւոր դէպքերը։

3. Գրաւոր։

Արտագրութիւն. Նախապատրաստուած թելադրութիւն. գրել անգիր արածը։ Գրաւոր պատասխաններ ուսուցչի հարցերին։

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ (5 ժամ)

1—100 թուերի շրջան՝ միաւորներով ու տասնաւորներով։ Չորս գործողութիւններ՝

բանաւոր ու գրաւոր։— Բազմապատկութեան աղիւսակը։ Վարժեցնել՝ նպատակայարմար բանաւոր եղանակով (մօտաւոր կլոր թուերի վերածելով) խնդիրներ վճռելու։

$^1/_8$, $^1/_3$, $^1/_6$, $^1/_{10}$ (անուանական թուերի վարժութիւններով)։— Չափեր՝ ռուբլի, կոպէկ. փութ, ֆունտ. (տեղական չափեր՝ դրամի, ծանրութեան ու երկարութեան)։

ԻՐԱՋՆՆՈՒԹԻՒՆ (2 ժամ)

1. Խոտ, ծաղիկ, բանջար, ծառ, պարտէզ. այգի, անտառ։

2. Ընտանի կենդանիներ՝ ձի, էշ, կով, ոչխար, այծ, ուղտ, շուն, կատու, մեղու, շերամ և այլն։

3. Թռչուններ՝ հաւ, սագ, բադ, հնդկահաւ, ճնճղուկ, աղաւնի, ծիծեռնակ, ագռաւ։

4. Մարդ՝ արտաքին նկարագրութիւն, սնունդ, մաքրութիւն, առողջապահութիւն, զգեստ։

5. Ընտանիքի անդամները—հայր, մայր, պապ, տատ. ծառայ, աղախին և այլն։

6. Ազգակցական անուններին բացատրութիւնը՝ քեռի, տալ, աներ, զոքանչ, տագր և այլն։

7. Լոյս, ճրագ, լապտեր, լամպ, մոմ, նաւթ, ձէթ։

8. Կրակ, բոց, ջերմութիւն. կերակուր եփել, սենեակ տաքացնել։

9. Այրուող նիւթեր՝ փայտ, ածուխ, աթար, քարածուխ։ Մոխիր. վառարան։

10. Դրամ՝ ոսկեայ, արծաթեայ, պղնձեայ։

ԱՆԳԼԵՐԷՆ (3 ժամ)

Բանաւոր վարժութիւններ՝ զրուցատրութեան նիւթը վերցնելով շրջապատից (դասարան և ն)։— Համարել մէկից մինչև հարիւր։

Գրագիտութիւն. կանոնաւոր ընթերցանութիւն։ Անգիր գիտենալ 3 փոքրիկ ոտանաւոր։

Տետրակներում արտագրել ընթերցանութեան վարժութիւններն ու փոքրիկ յօդուածները։ Ուղիղ կարդալու համար անհրաժեշտ մի քանի կարևորագոյն կանոնների բացատրութիւն։

ՆԿԱՐԱԶՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Կոր ձևերից՝ ձուածիր, ձուաձև։— Ծանօթութիւն հիմնական գոյների։ Ընդօրինակել գրատախտակից համեմատաբար աւելի

բարդ ուղղագիծ ու կորագիծ հարթ օրնամենտներ։— Բնականից նկարել պարզ առարկաներ՝ կայլն, մանգաղ, գերանգի, թի, բահ, ակնոց, տանձ, ձու, սալոր, պարզ տերևներ և այլն։

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Երգեր՝ պարզ չափերով ($^2/_4$, $^3/_4$)՝ պահանջելով, որ աշակերտներն էլ չափ տան։ Տարուայ վերջին՝ նաև $^4/_4$ չափով երգեր։— Սովորեցնել 6 նոր երգեր՝ եւրոպական ու հայկ. ժողովրդ. մոտիւներով։— Հասկացողութիւն ձայնի տևողութեան մասին։

ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ (1 ժամ)

Ընդօրինակել ուսուցչի գրած և գրքում եղած գեղագրական վարժութիւնները՝ թէ հայերէն, և թէ անգլերէն։

ՁԵՌԱԳՈՐԾ (2 ժամ)

Հաշիա (չանգալով)։ Եզրի և մէջի աւելի բարդ ձևեր (5—6 տեսակ)։ գործել առանձին կլոր սրբիչներ, որոնք միացնելով կազմել ծածկոցներ։

Կար։ Կարի սկզբնական մասը՝ քոքել, շուալ, վերկար, թապալ։

Զարդակար։ Թագալաղոր կար։

Ծանօթ.— Այս կարերը պիտի անցնել նախ՝ $^1/_4$ արշին բարակ սպիտակ կտորի վրայ և ապա գործադրել։

Գործադրութիւն։ Կարել մանկական գոգնոցներ, կրծկալներ և թաշկինակներ։ գունաւոր թելերով նախշել վարժուհու նկարածի վրայ։ Հաշիայի կլորաձև օրինակներից գործել սեղանի ծածկոց, մասուցարանի ծածկոց, բաղնիքի լիֆ, արկղի ծածկոց, քսակներ և այլն։ Եզրի ու մէջի հաշիաներով զարդարել պատրաստած նիւթերը։

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ (1 ժամ)

Շարքով վարժութիւններ՝ 1. Պարզ շարք. 2. Բարդ շարք. 3. Ազատ և շարքով վարժութեանց միութիւնից առաջացած շրջապարեր. միջանցուկ բազմապիսի քայլընթացքներ։ Ոստնել. ցատկել։ Վազել և լն։

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ (2 ժամ)

ՀԻՆ ՈՒԽՏԻՑ՝ Առաջնորդներ—

ա) Մովսէս. 1. Իսրայէլի նեղութիւնները Եգիպտոսում. 2. Մովսէսի ծնունդն ու ազատութիւնը. 3. Մովսէսի փախուստը. 4. Աստուած կանչում է Մովսէսին. 5. Եգիպտոսից դուրս գալը. 6. Իսրայէլացիք անցնում են անապատով. 7. Սինայի օրէնսդրութիւնը. 8. Ոսկէ հորթ. 9. Լրտեսներ. 10. Մովսէսի մահը։

բ) Յեսու. 11. Յեսուն նուաճում է Քանանը. Նրա մահը։

Դատաւորներ—

ա) Գեդէոն. 12. Գեդէոնի ընտրութիւնն ու մահը։

բ) Սամփսոն։

գ) Հեղի և Սամուէլ։

ՆՈՐ ՈՒԽՏԻՑ՝ Առակներ—

1. Որոմի առակը. 2. Անմիտ հարուստի առակը. 3. Թագուցեալ գանձի և մարգարտի առակները. 4. Մեծ ընթրիքի առակը։

Կարգ աստուածպաշտութեան. 1. Եկեղեցու ձևն ու բաժանմունքները։ 2. Սրբազան անօթներ ու զարդեր։ 3. Զգեստներ։ 4. Գրքեր։

ՀԱՅԵՐԷՆ (5 ժամ)

1. Կարդալ-պատմել։

Պէտք է ուշադրութիւն դարձնել, որ աշակերտները կարողանան սահուն կարդալ և մտքին համաձայն շեշտադրութեամբ արտասանել։ Աշակերտները պիտի կարողանան ճիշտ նախադասութիւններով և ազատ կերպով արտայայտել իրանց մտքերը. ճշտութեամբ պէտք է պատմեն սովորած յօդուածների բովանդակութիւնը։—Անգիր պիտի անեն 10 ոտանաւոր։

2. Քերականութիւն։

Այբուբենի տառերի անունները։ Տառերի թուական նշանակութիւնը՝ մինչև Ժ։

Տոպադարձի պարզ կանոններ. եզակի ու յոգնակի. պարզ և բարդ բառեր. հասկացողութիւն նախածանցի ու վերջածանցի մասին։

Առարկայի անուն։ Անունի փոփոխութեան (հոլովման) մի քանի գլխաւոր ձևեր՝ առանց հոլովների անունները տալու։ Յատուկ ու հասարակ անուն։

Առարկայի գործողութիւնը ցոյց տուող

բառեր։ Հասկացողութիւն երեք ժամանակների մասին։ Առարկայի որպիսութիւնը ցոյց տուող բառեր։

Ասացուած՝ պարզ և բարդ։ Պարզ ասացուածի վերլուծութիւն (բայ, ենթակայ, լրացուցիչ)։

3. Գրաւոր։

Արտագրութիւն։ Նախապատրաստուած թելադրութիւն՝ առաջադրելով մասնաւոր նպատակ։ Սովորած յօդուածի փոխադրութիւն։ Պարզ շարադրութեան փորձեր։

ԱՆԳԼԵՐԷՆ (5 ժամ)

Պարզ յօդուածների ազատ ընթերցում։ Զրուցատրութիւն անցած նիւթի շուրջը և շրջապատ առարկաների մասին։ Ուշադրութիւն դարձնել ճիշտ արտասանութեան վրայ։ Համառօտակի պատմել անցած յօդուածի բովանդակութիւնը՝ ուսուցչի օժանդակող հարցերի օգնութեամբ։ Անգիր անել 5 ոտանաւոր։

Սովորել մի քանի կանոններ, որոնք անհրաժեշտ են ուղիղ ընթեցման համար։ Տարբերել առարկայ, գործողութիւն և որպիսութիւն ցոյց տուող բառերը։

Արտագրել դասագրքից անցած բոլոր յօդուածները։ Նախապատրաստուած թելադրութիւն։

ՊԱՐՍԿԵՐԷՆ (3 ժամ)

Լրիւ ու կիսատ տառեր. դրանց գրութիւնը. կապակցութեան ձևերը. առոգանութեան նշաններ (զիր, զէրէր և փուշ)։

Ընթերցումն վարժութիւնների և փոքրիկ յօդուածների։ Զրուցատրութիւն շրջապատի մասին։ Անգիր անել 2 ոտանաւոր։

Մէջ։ Արտագրել դասագրքի միջի ընթերցանութեան վարժութիւնները։

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ (5 ժամ)

Հասարակ ու անուանական թուերով վարժութիւններ ու խնդիրներ՝ 1—1000-ի շրջանակում։ Գրաւոր խնդիրները պիտի բռնեն առաջնակարգ տեղ։— Անուանական թուերը խնդիրների մէջ պիտի գործածուեն երկու անունով միայն (փութ, ֆունտ. արշին, վերշոկ և այլն)։ Այս դասարանից սկսած անուանական թուերը պիտի համախմբուին որոշ իրաշրջանների շուրջը։ Ժամանակի, ծանրութեան, երկարութեան և դրամի չափերը շուկայի, տան, խոհանոցի, պարտէզի իրաշրջը-

ջաններից վեր առած խնդիրների մէջ այս դասարանի դասընթացի նիւթը պիտի կազմեն։

ԻՐԱԶՆՆՈՒԹԻՒՆ (2 ժամ)

1. Ցամաքային ճանապարհներ՝ շաւիղ, կածան, ձիու և սայլի ճանապարհ։
2. Խճուղի, երկաթուղի։
3. Ջրային ճանապարհ՝ նաւակով, նաւով, շոգենաւով։
4. Քաղաք, գիւղ, թաղ։
5. Քաղաքի նշանաւոր շէնքերը, եկեղեցիները, թատրոն, գործարան և այլն։
5. Պատմական յիշատակարաններ, արձան, արձանագրութիւն։
7. Վանք, դղեակ, ամրոց, գերեզմանատուն, աւերակներ։
8. Պարապմունք՝ արհեստներ ու արհեստանոցներ— դերձակ, կօշկակար, հացթուխ, դարբին և լն։
9. Երկրագործութիւն՝ հողի մշակելը— վարել, ցանել, հնձել, կալսել, աղալ և լն։
10. Գործիքներ՝ գութան, խոփ, մանգաղ, գերանդի, կամ, թի, եղան և լն։
11. Ցորեն, գարի, կորեկ, բրինձ, եգիպտացորեն, բամբակ, վուշ և լն։
12. Խաճարածութիւն՝ բուրդ, կաթ,

մածուն, սեր, իւղ, պանիր և լն։
13. Որսորդութիւն՝ որսի շուն-բարակ. նապաստակ, եղջերու, աղաւնի, կաքաւ. գայլ, աղուէս, արջ։
14. Ձկնորսութիւն՝ կարթ, ցանց, ուռկան. ձուկ որսալու տեղական եղանակները։
15. Տեղական սովորական ձկների տեսակները։
16. Տեղական տօներ. ուխտագնացութիւն։
17. Տեղական վայրերի հետ կապուած զրոյցներ, աւանդութիւններ և լն։
18. Գիւղի, կամ քաղաքի շրջակայքը— դպրոցական ճանապարհորդութիւն։
19. Գաղափար մասշտաբի մասին։
20. Դասարանի, բաղի, դպրոցի, եկեղեցու և փողոցի պարզ յատակագիծը։

1002
37759

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Աշխարհիս չորս կողմերը։ Կողմնացոյց։ Ջուղայի դպրոցները, եկեղեցիները, Վանքը, փողոցները, թաղերը, հրապարակները, առուն, այգիները, շրջակայ լեռները և լն։

Հարթութիւն, սարահարթ, լեռ, գագաթ, լանջ, ստորոտ, հովիտ, կիրճ. գետ, ակունք, գետաբերան, տաշտ, ափ, վտակ, լիճ, ծով,

Ա. ՄԵԱՍՆԻԿՅԱՆ

ծոց, նաւահանգիստ։ Բարեխառնութիւն. կլիմա։ Երկրագործութիւն, հովուութիւն, թափառական ու նստակեաց կեանք. արդիւնաբերութիւն, արդիւնագործութիւն, առևտուր։ Իշխանութիւն՝ հոգեւոր ու քաղաքական։ Կրթական հաստատութիւններ ևն։

Զուղայի մակերևոյթի կազմութիւնը, ջրագրական պայմանները, կլիման. հողի յատկութիւնները, բուսականութիւնն ու կենդանիները, բնակատեղիները, պարապմունքները, արհեստները, ճանապարհները, առևտուրը, կրթական վիճակը. քաղաքական վիճակը։

Նոյնը՝ Սպահանի վերաբերմամբ։

Զուղայի գաղթականութեան համառօտ պատմութիւնը։

ՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Գաղափար խղունջաձև ու ոլորուն գծերի մասին։

Բազմանկիւնիներ։— Հեռանկարի տարրական հիմունքները՝ դիտողութեամբ։— Նկարել հարթ ուղղագիծ մակերևոյթներ՝ կարճացած ձևով։— Ընդօրինակել գրատախտակից ոճաւոր օրնամենտներ։ Գունաւոր մատիտների գործածութիւն։ Տերևների ուրուագծումը (բնականից)՝ ամենապարզից մինչև խաղողի տերևը։— Բնականից նկարել թիթեռներ, խղունջներ, ոստրէներ, պարզ ծաղիկներ ևն։ Նոյնը նկարել յիշողութեամբ։

ՁԵՌԱԳՈՐԾ (2 ժամ)

Հաշիա։ Հաշիայի ամենաբարդ տեսակները՝ թէ եզրի, թէ մէջի, և թէ միաւորուող։ Վերջացնել ջանգալով հաշիա գործելը։

Կար։ Պատկար, ծակ թագալ։

Զարդակարեր։ Հասարակ խաչկար, ցողունակար, շղթայակար, յետկար։

Գործադրութիւն։ Պատրաստել մանկական ներքնաշրջազգեստներ, ուսնոցներ, բարձի երեսներ, մանկական շապիկներ, անձեռոցիկներ։ Պատրաստած նիւթերին պէտք է կարեն վերոյիշեալ հաշիաներից (շատ նուրբ թելով գործած)։ Նախշել կանվայի վրայ խաչկարով— գունաւոր, հաստատուն գոյն ունեցող թելերով։

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Երգել տալ դօ մաժորի ամբողջ գամման ու տետրախորդները։— Հասկացողութիւն ձայնի բարձրութեան և ուժգնութեան մասին։—

7—8 Եւրոպական ու ժողովրդական երգեր։ Մի քանի երգեր պիտի սովորեն երկձայն երգել։

ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ (1 ժամ)

Ընդօրինակել ուսուցչի տուած գեղագրութեան օրինակները՝ անգլերէն ու հայերէն։— Պիտի վարժուեն գեղեցիկ, միևնոյն ժամանակ արագ գրելու։

Ա. ԴԱՍԱՐԱՆ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Հին Ուխտից՝ Թագաւորներ.—

ա) Սաւուղ։ 1. Սաւուղը դառնում է թագաւոր։ 2. Սաւուղի անհնազանդութիւնը։ 3. Դաւթի ընտրութիւնը։

բ) Սաւուղ եւ Դաւիթ. 4. Դաւիթը Սաւուղի արքունիքում։ 5. Դաւիթ և Գողիաթ։ 6. Սաւուղը ատում է, իսկ Դաւիթը սիրում է Յովնաթանին։ 7. Դաւթի մեծահոգութիւնը։ 8. Սաւուղի մահը։

գ) Դաւիթ։ 9. Դաւիթը դառնում է թագաւոր։ 10 Աբիսողոմ։ 11. Դաւթի մահը։

դ) Սողոմոն։ 12. Սողոմոնը դառնում է թագաւոր։ 13. Տաճարի շինութիւնը։ 14. Սողոմոնի փառքն ու անկումը։

Թագաւորութեան բաժանումն

15. Յերոբովամ եւ Ռոբովամ։ 16. Եղիա և նրա մահը։ 17. Իսրայէլի և Յուդայի թագաւորութեան կործանումը։ 18. Բաբելոնի գերութիւնը։ 19. Համառօտ հայեացք ցԿրիստոս։

ՆՈՐ ՈՒԽՏԻՑ՝ Առակներ.—

1. Փարիսեցին ու մաքսաւորը։ 2. Զար ծառայի առակը։ 3. Հարուստի և աղքատ Ղազարոսի առակը։ 4. Այգու մշակների առակը։ 5. Սամարացու առակը։

Յովհաննէս Մկրտչի ծնունդը. քարոզութիւնն ու մահը։

Դաւանութիւն։ «Հաւատամք»ը՝ համառօտ բացատրութեամբ։

Կարգ աստուածպաշտութեան։ Նուիրապետութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ և պատարագի նշանակութիւնը։

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (5 ժամ)

1. Կարդալ-պատմել։

Աշակերտները պէտք է կարողանան ճիշտ առոգանութեամբ ու անսայթաք կարդալ աւելի բարդ յօդուածներ և իւրացնել ու պատմել նրանց բովանդակութիւնը։ Պէտք է կարողանան նոյնպէս չափածոյ գրուածքների բովանդակութիւնը արձակով պատմել։

2. Քերականութիւն։

Հոմանիշ բառեր։ Կէտադրութիւն՝ համաձայն նախադասութեան։ Անունների կանոնաւոր հոլովումը։ Բայերի կանոնաւոր խո-

նարհումը (ըստ Մ. Աբեղեանի)։ Բարդ ասացուած։ Գլխաւոր և երկրորդական խօսք։ Խօսքի բոլոր անդամները։ Խնդիր և խնդրառու։— «Է»-ի և «օ»-ի ուղղագրութիւնը։

3. Գրաւոր։

Արտագրութիւն։ Նախապատրաստուած թելադրութիւն։ Շարադրութիւն՝ նիւթը վերցնելով անցած յօդուածներից ու շրջապատից (10 հատ)։ Շարադրութեան նիւթը պիտի մշակել դասարանում՝ որոշելով բնաբանն և ճիւղաւորումը։

Ծան.— Արտագրել պիտի տալ այնպիսի կրտորներ, որոնք նիւթի, կամ կազմութեան կողմից ուշադրաւ են և որոնց մէջ սովորական բառեր յաճախակի չեն կրկնուում։

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (2 ժամ)

1. Նախապատմական մարդը։ Հնագոյն տարրական գիւտերը—նախնական գործիքներն ու զէնքերը (քարէ, բրոնզէ ու երկաթէ)։ Կրակ. բնակարան. հագուստ (մանելու և գործելու արհեստներ). ամանեղէն (փայտէ, կաւէ ու ապակեայ). զարդեր։— Պարապմունք՝ որսորդութիւն, խաշնարածութիւն և երկրագործութիւն։ Փոխանա-

կութիւն (հաղորդակցութեան միջոցներ)։ Դասակարգեր՝ քուրմեր, ազատներ, գերիներ ու ստրուկներ։ Ընտանեկան կեանք։ Դիր։

2. Հայրենի առասպելներ ու վէպեր։ Հայկ ու Բէլ։ Արամ։ Արա գեղեցիկ ու Շամիրամ։ Տիգրան Երուանդեան։ Վահագն։ Վաղարշակ։ Երուանդ Արշակունի։ Արտաշէս Աշխարհակալ։ Արտաշէս Բ. և Արտաւազդ։ Դաւիթ և Մհեր։

ԱՆԳԼԵՐԷՆ (4 ժամ)

Վարժ ընթերցանութիւն։ Պատմել անցած յօդուածը, նախ՝ հարցերով, ապա՝ առանց հարցերի։ Անգիր գիտենալ 8 ոտանաւոր։ Համարել (քանակական ու դասական թուակարգերով)։ Սովորեցնել օրերի, ամիսների ու եղանակների անունները։ Դասի ժամանակ պիտի խօսել միմիայն անգլերէն լեզուով։

Քերակ.— Գոյական, ածական, բայ։ Պարզ ասացուածի վերլուծութիւն՝ տերմիններով։ Կանոնաւոր հոլովման ու խոնարհման մի քանի վարժութիւններ։ Ուղղագրական 3-4 պարզ կանոններ։

Գրաւոր։ Արտագրութիւն և նախապատրաստուած թելադրութիւն։ Ուսուցչի տուած հարցերին գրաւոր պատասխանել։

ՊԱՐՍԿԵՐԷՆ (3 ժամ)

Վարժ կարդալ ու պատմել անցած փոքրիկ յօդուածները։ Անգիր անել 5 ոտանաւոր։ Համարել մէկից մինչև հազար։ Շաբաթուայ օրերի, ամիսների ու եղանակների անունները։

Քերակ.—Գոյական, ածական և բայ։ Կանոնաւոր հոլովման և խոնարհման մի քանի վարժութիւններ։

Գրութիւն։ Մէջզ, արտագրութիւն և թելադրութիւն։

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ (3 ժամ)

1—1000,000-ի սահմանում՝ վերացական ու բարդ անուանական թուերով խնդիրներ։ Քառակուսի և խորանարդ չափեր։

Միութեան վերածելով՝ 3 յայտնի անդամների միջոցով 4-րդը գտնել։ Տոկոսի և զեղջի կանոնները՝ միութեան վերածելով։

Խնդիրների իրաշրջանները— քնական գիտութիւնները, աշխարհագրութիւնը, փոստն ու երկաթուղին, մակերևոյթներն ու ծաւալը, գնումն ու վաճառումն։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Մաթեմատիքական աշխ.—Երկրագունտ։ Առանցք և բևեռներ։ Երկրի շար-

ժուելը իւր առանցքի ու արևի շուրջը և այս շարժումներից առաջ եկող երևոյթները երկրիս վրայ։— Գլոբուս։ Հասարակած։ Արևադարձային գծեր։ Բևեռային շրջաններ։ Միջօրէականներ։ Կլիմայական գօտիներ։ Տեղի երկարութիւնն և լայնութիւնը։ Կիսագնտեր։

Ֆիզիական աշխարհագր.— Ջրի և ցամաքի բաշխումը երկրագնտի վրայ։ Մայր ցամաք. կղզի. թերակղզի. պարանոց։ Աշխարհիս մասերը և նրանց համեմատական մեծութիւնը։

Հարթութիւններ— ստորահարթ, սարահարթ։ Լեռնաշղթայ, լեռնաշխարհ, լեռնահանգոյց։ Հրաբուխ։

Ծովի յատակի կազմութիւնը— ծանծաղուտներ, ծովածայռեր։ Ծովային հոսանքներ։

Օդ։ Բարեխառնութեան հորիզոնական և ուղղահայեաց բաշխումը. օդի շարժումը— հողմ։ Քամիների ու ծովային հոսանքների նշանակութիւնը։ Տեղատուութիւն և մակընթացութիւն։ Ջուրը ցամաքի վրայ. գետ և վտակ. գետի աւազան. ջրաբաշխական գծեր։ Ցաւիտենական սառուցի աշխարհ. ձիւնասահման. սառցարան. սառցադաշտ։

Կլիմայ։ Կլիմայի կախումը աշխարհագրական լայնութիւնից, մակերևոյթի կազմութիւնից, բարձրութիւնից, տիրող քամիներից ու ծովային հոսանքներից։

Բոյսերի ու կենդանիների տարածումը ըստ աշխարհագրական լայնութեան ու բարձրութեան։

Մարդ։ Մարդկային ցեղերի բաժանումը (աւելի մանրամասն անցնել Հնդ-Եւրոպական ցեղի ճիւղերի մասին)։

ԵՐԿՐԱՉԱՓ. ՁԵՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ (1 ժամ)

1. Խորանարդ։ Գաղափար տեղերի մասին՝ աջ, ձախ, առջև, ետև։ Գաղափար ուղղութեան մասին՝ հորիզոնական, ուղղահայեաց, զուգահեռական ևն։ Անկիւն և նրա տարրերը։ Տարածութիւն։ Չննութիւն և գործադրութիւն երկարութեան չափերի։

2. Քառակուսին՝ իբրև խորանարդի մակերևոյթներից մէկը. ա) Չննում՝ ձև, կողմեր, մակերևոյթ, բովանդակութիւն. մակերևոյթ չափելը։ բ) Յօրինուածք (կոնստրուկցիա)։

3. Քառակուսի պրիզման՝ իբրև խորանարդից կազմուած մարմին։

4. Քառանիստը կամ ուղղանկիւն քառանկիւնին.— չննութիւն, յօրինուածք, ծաւալը գտնելը։

5. Անցնել ուղղանկիւն եւ եռանկիւն պրիզմաները՝ քառակուսի պրիզմայի հետ բաղդատելով։

6. Քառանկիւնի մակերեւոյթի չափելը։

7. Եռանկիւնու տեսակները, յօրինուածքը և չափելը։

8. Բազմակողմանի պրիզմա։

9. Բազմանկիւնի։

10. Շեղանկիւն պարալելոգրամ. չափելը։

11. Գլան. համեմատութիւն պրիզմաների հետ։

12. Շրջան և նրա մասերը։ 360°. յօրինուածք. ամբողջ շրջանի ու նրա մասերի չափելը (շառաւիղ, տրամագիծ, շրջագիծ, մակերևոյթ, կիսաշրջան, հատած և հատուած)։

13. Անցած մարմինների ծաւալը չափել՝ խորանարդը միութեան չափ ընդունելով։

ՆԿԱՐԱԳՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Հեռանկարի հիմնական սկզբունքները (տեսողութիւն)։

Նկարել հարթ շրջանակներ (կարճացած ձևով)։

Երկրաչափական մարմիններ (կրկնել խորանարդը)։ Բուրգ՝ մի քանի հիմքով։ Կոն. գըլան, գունտ (նկարել իսկականից)՝ գլխաւոր ստուերներով։

Երկրաչափական մարմիններին նման առարկաների ուրուագծումը. օր.՝ արկղ, պահարան, դոյլ, բաժակ, շաքարի գլուխ, ձագար, ձմերուկ և ուրիշ առարկաներ։

Բարդ տերևներից օրնամենտներ. վարդանման ծաղիկներ. արմաւենիներ (պալմետկա)։ Նոյնը նկարել նաև յիշողութեամբ։

Ջրաներկի գործածութիւն՝ լոկ գոյն տալու համար։

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (3 ժամ)

Բնութիւն։ Մարմիններ՝ օրգանական ու անօրգանական։ Երևոյթ։ Փորձ ու դիտողութիւն։

1. Օդ։ Ինչ տեսակ մարմին է օդը։ Պինդ, հեղուկ և գազային մարմինների զանազանութիւնը։ Մարմինների երեք վիճակը։ Օդի առաձգականութիւնն ու սեղմուելը։ Օդի ճնշումը։ Օդի ճնշման պատճառը։ Մթնոլորտ։ Բարոմետր։ Չափեր։ Մարմիններ չափելը։ Ծանրութեան չափելը։ Կշեռք։ Տասնորդական չափեր։ Մարմինների տեսակարար կշիռը։ Մարմինների ընդարձակուելը տաքանալուց։ Հեղուկ մարմինների ընդարձակուելը։ Ջերմաչափ։ Գազային մարմինների ընդարձակուելը։ Օդի բաղադրութիւնը։ Բորակածին ու թթուածին։

Ածխաթթուտ գազ։ Մոմի այրուելուց գոյացող նիւթերը։ Ջրածին։ Ֆիզիքական ու քիմիական երևոյթներ։ Հասարակ խառնուրդ և քիմիական միացում։ Պարզ ու բարդ մարմիններ։ Օդապարիկ։ Օդի շարժողութիւնը։ Քամի։

2. Ջուր։ Ջրի նշանակութիւնը և տեսակները։ Ջրի եռացումը։ Ջրի գոլորշիանալը։ Ամպ, մառախուղ, անձրև ու ձիւն։ Ջրի սառչելը։ Սառցի ձևի փոփոխուելը։ Սառցադաշտեր։ Ջրի ընդարձակուելը սառչելիս։ Ջրի լուծող դերը։ Բիւրեղացող և չբիւրեղացող մարմիններ։ Ջրի քամելը և զտելը։ Ջրի շըրջանառութիւնը բնութեան մէջ։

ՁԵՌԱԳՈՐԾ (2 ժամ)

Կար։ Ծաղկակար, հասկակար, կրկնակի և երեքտակ ցողունակար։ Օղակ՝ թելով շինած և կտորի վրայ։

Գործադրութիւն։ Կարել լեփչիկներ, շապիկներ, իւրկաներ և այլն։

Գարուսի թելով գործելը։ Ոսկրէ չանգալով պատրաստել 3-4 տեսակ գլխարկներ, ուսի շալեր, մանկական վերարկուներ, գլխի թաշկինակներ և այլն՝ բաժանած ու ամբողջ թելով։

ՁԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Երաժշտական տոն. նրա յատկութիւնները՝ բարձրութիւն, տևողութիւն, ուժգնութիւն, տեմբր։ Ձայնահնչիւնների անունները. օկտաւ։ Բնական մաժոր գամման։ Բնական մինոր գամման։ Գծային սիստեմով՝ դո, ռէ, մի, ֆա և այն անուններով։— Զարդարանքներ. ընդհարումներ. խաղ։— Նոտաներով երգել վարժութիւններ ու. ծանօթ երգեր՝ զանազան չափերով։

ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ (1 ժամ)

Գրքից և ուսուցչի տուած օրինակներից ընդօրինակութիւններ՝ թէ հայերէն, թէ անգլերէն լեզուով։

Բ. ԴԱՍԱՐԱՆ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Նոր ուխտից։ Նոր ուխտն անցնել սիստեմատիք կերպով։ Գլխաւոր ուշադրութիւնը պիտի դարձնել Քրիստոնէական կրօնի սկզբունքների վրայ։

Ծնունդ։ Տաճարին ընծայուիլը։ Աբեւելքի մոգերը և Եգիպտոս փախչելը։ Տասներկու տարեկան Յիսուսը Տաճարում։ Յովհաննէս Մկրտչի ծնունդը, քարոզութիւնը։ Յիսուսի մկրտութիւնը։ Առաքեալների մկրտութիւնը։ Յիսուսն ու մանուկները։ Ո՛վ է մեծ Երկնից Արքայութեան մէջ։ Կափառնայումի հարիւրապետը։ Փարիսեցին ու մաքսաւորը։ Անառակ որդու առակը։ Զաքքէոս։ Ողորմած սամարացու առակը։ Այրի կնոջ լուման։ Զար ծառայի առակը։ Քանանացի կինը։ Յիսուսը քարոզում է Նազարէթում։ Հարուստ երիտասարդը։ Անմիտ հարուստի առակը։ Կորուսեալ ոչխարի և դրամի առակը։ Պետրոսի խոստովանութիւնը։ Յովհաննէսի մահը։ Սերմնացանի առակը։ Որոմի առակը։ Մեծ ընթրիքի առակը։ Այգու մշակների առակը։ Քան-

քարների առակը։ Մեծատան ու աղքատ Ղազարոսի առակը։ Տասն կոյսերի առակը։ Վերջին դատաստան։ Լերան քարոզը և ինն երանութիւնները։ Լուացումն, կերակուր, պահք և շաբաթ։ Սամարացի կինը։ Մարիամ ու Մարթա։ Յիսուսի թշնամիները։ Յիսուսի օծումը Բեթանիայում։ Յիսուսը մտնում է Երուսաղէմ։ Յիսուսը վիճաբանում է թշնամիների հետ։ Յուդայի մատնութիւնը։ Ոտնալուայ և խորհրդաւոր ընթրիք։ Յիսուսը Գեթսեմանում։ Յիսուսը քահանայապետի առջև։ Պետրոսի ուրացութիւնը։ Յիսուսը Պիղատոսի առջև։ Խաչելութիւն։ Թաղումն։ Յարութիւն։ Համբարձում։

ՀԱՅԵՐԷՆ (4 ժամ)

Կարդալ ու ազատ պատմել ընդարձակ յօդուածներ՝ բաղկացուցիչ մասերի բաժանելով։ Համառօտել յօդուածը՝ տարբերելով նրա էականը երկրորդական մասերից։ Անգիր անել 8 տաներաւոր։

Քերականութիւն։ Ամփոփ գաղափար բոլոր մասն բանիների մասին (ըստ Մ. Աբեղեանի հինգ կարգի բաժանելով՝ իրանց ստորաբաժանումներով)։

Անկանոն հոլովում և անկանոն խոնար-

հում։ Համաձայնական վերլուծութեան վարժութիւններ։ Միաւորեալ խօսք։ «Յ»-ի և «ւ»-ի ուղղագրութեան կանոնները։

Գրաւոր։ Արտագրութիւն։ Նախապատրաստուած թելադրութիւն։ Շարադրութիւն՝ նիւթ վերցնելով անցածից ու շրջապատից։ Դասարանում կազմել շարադրութեան յատակագիծը։ Տարուայ ընթացքում պիտի գրեն առնուազն 10 շարադրութիւն։

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Սեպագիր արձանագրութիւններ։ Ուրարտեան երկիր։ Հատտիներ։ Ասորեստանի ազդեցութիւնը։ Խալդիների (հատտիների) խառնուելը հայերի հետ։

Պարսից տիրապետութեան հաստատուելը Հայաստանում։ Տիգրան։ Կիւրոս։

Աղեքսանդր Մակեդոնացի։ Սելեւկեաններ։ Տիգրան Մեծ։ Տրդատ Պարթև։ Հռովմայեցոց և պարսից կռիւները սահմանի համար։ Հայոց հեթանոսական կրօնը։ Քրիստոնէութեան տարածուելը Հայաստանում։ Ասորի քրիստոնեաների ազդեցութիւնը։ Տրդատ ու Գ. Լուսաւորիչ։ Եկեղեցու կազմակերպութիւնը։ Կաթուղիկոսութիւն։ Եկեղեցին Ներսէս մեծի օրով։ Ինքնագլխութիւն։ Կաթուղիկոսական աթոռանիստը։ Եկեղեցական կալուածները։ Քրիստոնէութեան ազդեցութիւնը հայերի վրայ։

Արշակ Բ. և Պապ։ Ընդհարումներ կաթուղիկոսութեան և նախարարների հետ։

ԱՆԳԼԵՐԷՆ (4 ժամ)

Կարդալ և պատմել համեմատաբար աւելի ընդարձակ յօդուածներ։ Պատմել՝ թէ ուսուցչի հարցերի օժանդակութեամբ, թէ ինքնուրոյն կերպով։ Անգիր անել 8 ոտանաւոր։

Քերակ. — Գաղափար տալ բոլոր մասն բանիների մասին։ Անգլերէնին յատուկ խընդրառութեան մի քանի գլխաւոր դէպքեր։ Սովորել 4—5 անհրաժեշտ ուղղագրական կանոններ։

Գրաւոր։ Արտագրութիւն։ Նախապատրաստուած թելադրութիւն։ Գրաւոր պատասխաններ ուսուցչի տուած հարցերին։

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ (4 ժամ)

Բարդ անուանական թուերով չորս գործողութեամբ ընդհանուր խնդիրներ՝ տեղական, անգլիական, ռուսական և ֆրանսիա-

կան չափերով։— Ժամանակի վերաբերեալ խնդիրներ։

Թուերի բաժանականութիւնը (թուերի անմնացորդ բաժանման նշանացոյցները, թուերի վերլուծումը պարզ բաժանարարների. ամենամեծ ընդհանուր բաժանարար, ամենափոքր բազմապատիկ թիւ)։

Ընդհանուր գիտելիք կոտորակների մասին։ Կոտորակների կրճատումը, մի յայտարարի բերելը. գտնել ամբողջը, երբ յայտնի են նրա մասերը։

Տարբեր յայտարար ունեցող կոտորակների գումարումը, հանումը, բազմապատկումը և բաժանումը։ Պարզ հասկացողութիւն տասնորդական կոտորակների մասին։

ՊԱՐՍԿԵՐԷՆ (3 ժամ)

Կարդալ աւելի բարդ յօդուածներ և պատմել։ Անգիր անել 8 ոտանաւոր։ Թարգմանել փոքրիկ հատուածներ հայերէնից պարսկերէն։

Քերակ.— Մասն բանիների անունները և նրանց մասին պարզ գաղափար։ Շարունակել խոնարհումի վարժութիւնները և աւելի ընդարձակել։ Ուղղագրական 3—4 կանոններ։

Գրաւոր։ Մէջդ, արտագրութիւն և գրաւոր պատասխաններ ուսուցչի տուած հարցերին։ Բրդումի և հնդուսի թուաբանութիւն։

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (3 ժամ)

1. Երկիր։ Հող։ Երկրի կղզի կազմը։ Գրանիտ։ Լեռնային տեսակներ ի քայքայուելը։ Աւազ ու աւազաքարեր։ Կաւ ու կաւային թերթաքարեր։ Կրաքարեր ու կրի կաթսրերի ծագումը։ Երկրի կեղևի դարաւոր տատանումները։ Կրաքարերի քայքայուելը։ Այրեր։ Երկրի կեղևն ու միջուկը։ Երկրաշարժ ու հրաբուխ։ Ցամաքի ու լեռների ծագումը։ Ծովերի ցամաքելը և աղահանդերի գոյանալը։ Գաճ։ Քարածուխ, տորֆ, ածուխ ու նաֆթ։ Մետաղներ։ Մետաղներ ստանալը։ Երկաթ։ Պղինձ։ Կապար, անագ և ցինկ։ Ազնիւ մետաղներ՝ սնդիկ, արծաթ ու ոսկի։

2. Բոյս։ Ծաղկաւոր բոյսեր։ Լոր։ Բազուկ։ Եղէգ։ Ցորեն։ Կարտոֆիլ։ Սոխ։ Արմատ ու ցօղուն։ Տերև։ Սայրենի։ Խնձորենի։ Մասրենի։ Ծաղիկ։ Եգիպտացորեն։ Ընկուզենի և ուռենի։ Ծառերի աչքերը։ Բուսական բջիջ։ Արմատն ու նրա դերը։ Սննդարար նիւթեր։ Ցօղունն ու նրա դերը։ Տերևն ու նրա դերը։ Սալայի գոյանալը և սննդարար նիւթերի կուտակուելը։ Սննդարար նիւթերի հոսանքները։ Բոյսերի շնչառութիւնը։ Ծաղիկների փոշոտուելն ու բեղմնաւորուելը։ Միջատների ու քամու դերը։ Պտուղ։ Բոյսերի

տարածուելը։ Սերմի կազմութիւնը։ Լոյսի անհրաժեշտութիւնը բոյսի համար։ Կենդանի մարմինների փոփոխուելը և նախկին դարերի բոյսերը։

Անծաղիկ բոյսեր։ Զարխոտ։ Ցանցամամուռ։ Հովանոցաւոր սունկեր։ Բորբոս։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Պարսկաստան։ Դիրքը։ Մակերևոյթի կազմութիւնը։ Կլիման։ Ռոգումը։ Կենդանական ու բուսական աշխարհ։ Հանքային հարստութիւն։ Ազգաբնակութիւնը։ Կրօն։ Հայերը։ Զբաղումներ՝ երկրագործութիւն, խաշնարածութիւն և ն։ Բերքեր։ Ներքին ու արտաքին առևտուր։ Հաղորդակցութեան միջոցներ։ Պետական կազմակերպութիւն։ Օտար պետութիւնների դիրքը Պարսկաստանի հանդէպ։ Վերածնունդ։ Նահանգները, գլխաւոր քաղաքները և ն։

2. Անդրկովկաս ու Տաճկահայաստան (ընդարձակ)։

ԱՍԻԱ։ Դիրքը։ Մեծութիւնը։ Ափերի գծագրութիւնը։ Մակերևոյթի կազմութիւնը։ Կլիման։ Գետերը և լճերը։ Ցլորա։ Ֆաունա։ Ազգաբնակութիւնը։

Արեւմտեան Ասիա։ Փոքր-Ասիա և Հայաստան։ Միջագետք։ Արաբիա։ Ասորիք և Պաղեստին։ Իրան։ Խիվա և Բուխարա։

Կենտրոնական Ասիա։ Տիբետ։ Մոնղոլիա։

Հարաւային Ասիա։ Հնդկաստան։ Հընդկաչին։ Մալայեան արշիպելագ։

Արեւելեան Ասիա։ Չինաստան։ Մանջուրիա։ Կորէա։ Եապոնիա։

Սիբիր։ Բնակիչները։ Գլխաւոր նահանգներն ու քաղաքները։

ԵՐԿՐԱՉԱՓ. ՉԵՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ (1 ժամ)

Բրգաձեւեր։ Քառանկիւնի և եռանկիւնի բուրգեր. ըմբռնում ու համեմատութիւն բազադրիչ տարրերի ու դիրքերի։ Բրգաձև մարմինների երկարութեան, մակերևոյթների ու ծաւալի չափելը։ Ծաւալը չափում են թիթեղեայ պրիզմաների ու բուրգերի մէջ լցրած ջրով։

Հատած բուրգ՝ նկարագրել առանց չափելու։

Կոն եւ հատած կոն։ Վերջինս՝ առանց չափելու։ Զուածիր ու ձուաձեւ՝ իբրև գլանի ու կոնի հատածներ։ - Գունեs։ Սրա տարրերի համեմատական չափերը։ Մակերևոյթի ու ծա-

ապի չափերը՝ հիմնուելով եռանկեան, շրջանի և կոնի վրայ։

ՉԱՑՆԱԳՐՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Սոլի և մաի բանալիներ։ Երգի ու պատուգայի տևողութեան չափերի գրութիւնը։ Դիատոնիկ ու խրոմատիկ գամմաներ։ Դիեզ, բեմոլ ու բեկար։ Դո, սոլ և րէ մաժոր գամմաներ՝ իրանց համապատասխան մինորներով։ Նոտաներով երգել՝ վարժութիւններ և եղանակներ (երբեմն երկձայն)։

ՁԵՌԱԳՈՐԾ (2 ժամ)

Կար։ Երիզաւոր ցանցակար (5-6 տեսակ). վանդակաւոր ցանցակար (4-5 տեսակ). եզրի ցանցակար։

Հաստիա։ (սմակուկով)։ Գործել միջի, եզրի և տանձին պտուտակներով միացրած հաշիաներ։

Կանվա։ Թեքկար. խաչկար. աստղակար։ Ընդօրինակել նախ՝ պարզ, և ապա՝ բարդ նկարներ։

Ծանօր.—Փոքր կարերը նախ՝ սովորեցնել ¹/₄ արշին կանվայի և քաթանի վրայ։

Գործադրութիւն։ Քաթանից պատրաստել երեսսրբիչներ, անձեռոցիկներ, բարձի

ծածկոցներ, կանացի շապիկներ, կոֆտաներ։ Կանվայի վրայ շինել բարձի երեսներ, կօշկի երեսներ, աթոռի ծածկոցներ, մանկական վերմակներ և լն։

ՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ (1 ժամ)

Գաղափար լոյսի ու ստուերի մասին։ Երկրաչափական մարմիններ՝ զանազան դիրքերով. նկարել գլխաւոր ու երկրորդական ստուերներով։ Երկրաչափական մարմինների հատած ձևեր նկարել։ Նոյն մարմինների խմբանկարներ։ Նկարել կուժեր, սափորներ, վազեր, պտուղներ և այլ գեղեցիկ ու ձևաւոր առարկաներ բոլոր ստուերներով։ Նոյնը նկարել յիշողութեամբ։

Համաչափ ձևեր նկարելու վարժութիւններ՝ միաժամանակ երկու ձեռքով (ամերիկական սիստեմով)։

Զրաներկի մի երանգի (տոն) գործածութիւնը (սեպիա, տուշ) կատարեալ ստուերումով։— Ուսուցչի տուած հիմնական տարրերից տանը նախշեր ու զարդեր յօրինել (ստիլիզացիա)։

Գ. ԴԱՍԱՐԱՆ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Գործք առաքելոց։

Հոգեգալուստ։ Անանիա և Սափիրա։ Եօթը սարկաւագների ընտրութիւնը և ժողով աղքատաց հոգաբարձութեան։ Առաքեալները բարձրագոյն աստեանի առջև։ Եթովպացի ներքինին։ Կուռնելիոսի դարձը։ Ստեփաննոսի մահը։ Սաւուղի դարձը։ Պօղոսը Դամասկոսում և Երուսաղէմում։ Առաքելական առաջին, երկրորդ և երրորդ ուղևորութիւնները։ Պօղոսի դատը։ Պօղոսի Հռովմ գնալը և մահը։

Շարադրանքներ։

1. Հռիփսիմեանց՝ «Անձինք նուիրեալք...» և Հ. Փ. տները։

2. Յարութեան՝ «Այսօր յարեաւ...» 3 տուն։

3. Ծննդեան՝ «Խորհուրդ մեծ և սքանչելի...» 3 տուն։

4. Լուսաւորչի՝ «Այսօր զուարճացեալ» 1 տուն։

Քրիստոնէական կրօնի հիմունքներ։

ՀԱՅԵՐԷՆ (4 ժամ)

Պատմել ու բացատրել ընդարձակ յօդուածներ։ Կարդալ արևմտեան աշխարհաբարով գրուած յօդուածներ և պատմել արևելեան աշխարհաբարով։ Անգիր անել 10 տաներ։

Քերակ.—Սիստեմատիկ կերպով անցնել համաձայնութիւնը՝ նախորդ դասարաններում անցածի վրայ աւելացնելով համազօր խօսքերը, կոչական բառերը և խօսքերի կրճատումը։ Բառակազմութիւնից՝ բարդ ու ածանցուած բառեր։

Գրաւոր։ Արտագրութիւն։ 12 շարադրութիւն՝ նիւթը վերցնել անցած դասերից (անխտիր) և շրջապատից։

Ծանօթ.—Արտագրութիւնը պիտի դադարեցնել միմիայն այն ժամանակ, երբ աշակերտները կը կարողանան գրել վարժ և առանց տառասխալի։

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Նախարարական կազմակերպութիւնը։ Նախարարների ծագումը։ Տանուտէր և սեպուհ։ Նախարարների յարաբերութիւնը թագաւորների և իրար հետ։ Պաշտօններ զօրքի մէջ և պալատում։ Յարաբերութիւնը ժողո-

վրդի հետ (քաղաքացիք ու գիւղացիք)։ Որսորդութիւն և պատերազմ (զօրքի կազմութիւնը, կռուի սովորական եղանակը)։ Նախարարական ամրոցները։

Հայաստանի բաժանուելը յոյների ու պարսիկների մէջ։ Արշակունիների անկումը։ Արտաշէս վերջին։ Մարզպանութիւն։

Գրերի գիւտ։ Թարգմանիչներ։ Սրանց աշակերտները։

Կրօնական պատերազմներ. սրանց կրօնական, տնտեսական ու քաղաքական պատճառները։ Աւարայրի ճակատամարտը և նրա անմիջական հետեւանքները։ Պատերազմների երկրորդ շրջանը (Վահանանք)։ Նւարսակի դաշնադրութիւնը։ Հայ մարզպաններ։

Հայոց եկեղեցու բաժանումը միւս եկեղեցիներից։ Հայկական տոմարի հաստատումը. Հայ եկեղեցու ինքնօրինութիւնը։

Արաբների արշաւանքը։ Դուինի ոստիկանութիւնը։ Հայաստանի քաղաքական կազմակերպութիւնը (իշխանաց իշխան, սպարապետ, նախարարներ)։ Ոստիկանների վերաբերմունքը դէպի Հայ Եկեղեցին։ Մամիկոնեանների և բագրատունիների բռնած դիրքը դէպի ոստիկանները։ Վրաց եկեղեցու բաժանումը Հայ Եկեղեցուց։

Բագրատունիք։ Սրանց բարձրանալու պատճառները։ Աշոտ Ա.։ Սմբատ։ Աշոտ Երկաթ։ Յարաբերութիւններ յոյների հետ։ Մանր-մունր թագաւորութիւններ Հայաստանում։ Աշոտ Ողորմած։ Անի քաղաք։ Արաբների ազդեցութիւնը հայոց քաղաքակրթութեան վրայ։ Առևտուր և առևտրական ճանապարհներ։

ԱՆԳԼԵՐԷՆ (4 ժամ)

Կարդալ ու պատմել ընդարձակ յօդուածներ։ Անգիր անել 10 ոտանաւոր։

Քերակ.— Ընդլայնել մասն բանիների մասին տրուած տեղեկութիւնները. հոլովումի ու խոնարհումի նոր վարժութիւններ։ 4—5 անհրաժեշտ քերականական գիտելիքներ՝ անգլերէնին յատուկ։ Կէտադրութիւն։

Գրաւոր։ Արտագրութիւն։ Նախապատրաստուած թելադրութիւն։ Գրաւոր թարգմանութիւն հայերէնից անգլերէն։ Գրել փոքրիկ շարադրութիւններ (10 հատ)։

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ (3 ժամ)

Մանրամասնօրէն անցնել մետրիկ չափերը՝ համապատասխան խնդիրներ վճռելով։

Կոտորակային անուանական թուեր։

Տասնորդական կոտորակների յատկութիւնները։ Հասարակ կոտորակը տասնորդական դարձնել։ Գործողութիւններ լիակատար տասնորդական կոտորակներով։ Պարբերական կոտորակներ։ Յարաբերութիւններ և համեմատութիւններ։ Երից կանոն։ Բարդ երից կանոն։ Տոկոսների կանոն։

ՊԱՐՍԿԵՐԷՆ (3 ժամ)

Կարդալ ու պատմել ընդարձակ յօդուածներ։ Անգիր անել 8 ոտանաւոր։ Պատմել անգիր արածի բովանդակութիւնը։

Քերակ.— Մասն բանների մասին տալ նոր տեղեկութիւններ։ Խոնարհման վարժութիւններ՝ տարբեր լծորդութիւնների։

Գրաւոր։ Արտագրել գրքից։ Թելադրութիւն։ Փոքրիկ շարադրութիւններ՝ նախօրօք նիւթը դասարանում պատմելով ու մշակելով։

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (3 ժամ)

Մարդ։ Գործարան, բջիջ ու գեղձ։ Գործարանների համակարգութիւն։ Մարմնի կազմութեան պլանը։ Կմախք։ Ոսկրների կազմութիւնն ու միացումը։ Գլխի, ընի ու վերջաւորութիւնների ոսկրները։ Մկաններ։ Նեարդային համակարգութիւն։ Մարսողական գործարանների համակարգութիւն։ Արեան շրջանառութեան գործարանների համակարգութիւն։ Ենչաւական գործարանների համակարգութիւն։ Արտաթորութեան գործարաններ։

Կենդանի։ Կաթնասուններ՝ կատու, շուն, խոզ, չղջիկ, ուղտ և ուրիշ հանրածանօթ կաթնասուններ։ Թռչուններ՝ գիշատիչներ, հաւանմաններ, ջրայիններ, ճահճայիններ և ն։ Թռչունների կեանքը, բուն շինելը, ձագ հանելը և ն։ Սողուններ՝ օձ, մողէս, կրեայ, կոկորդիլոս։ Գորտազգիներ։ Ձրկներ։ Անողնաւար կենդանիներ՝ միջատներ, սարդազգիներ։ յօդուածոտանիներ։ Այգու խղունջ. անձրևաորդ։ Երիզորդ։ Մակաբուծութիւն։ Տրիխին։ Օրգանիզմների փոփոխելու և յարմարուելու նշանակութիւնը։ Հիդրա։ Ամէոբա։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Աւստրալիա։ Դիրքը։ Մեծութիւնը։ Ափերի գծագրութիւնը։ Հետազօտումը։ Մակերևոյթի կազմութիւնը։ Կլիման։ Գետերն ու լճերը։ Ֆլորա ու ֆաւնա։ Աւստրալիական զաղութներ։ Աւստրալիայի կղզիները։ Բնու-

թիւնը։ Ազգաբնակութիւնն ու գաղութները։

Աֆրիկա։ Դիրքը։ Մեծութիւնը։ Ափերի գծագրութիւնը։ Մակերևոյթի կազմութիւնը։ Կլիման։ Գետերն ու լճերը։ Բուսականութիւնը։ Կենդանական աշխարհը։ Ազգաբնակութիւնը։ Երկրամասերը։ Եգիպտոս։ Մարոկկոյ, Ալժիր, Թունիս, Տրիպոլի ու Բարկա։ Սահարա։ Հաբէշստան։ Սուդան։ Եւրոպական գաղութներ։

Հարաւային Աֆրիկա։ Աֆրիկայի կղզիները։

Ամերիկա։ Դիրքը։ Մեծութիւնը։ Ափերի գծագրութիւնը։ Ամերիկայի գիւտը։ Մակերևոյթի կազմութիւնը։ Կլիման։ Գետերն ու լճերը։ Բուսականութիւնը։ Կենդանական աշխարհը։ Ազգաբնակութիւնը։ Հիւսիսային Ամերիկա։ Գրենլանդիա և Հիւսիս-Ամերիկեան արշիպելագ։ Կանադա և Ալեասկա։ Միացեալ նահանգներ։ Կենտրոնական Ամերիկա։ Մեքսիկա և Վեստ-Ինդիա։ Հարաւային Ամերիկա։ Վենեցուելա և Գվիանա։ Բրազիլիա։ Արգենտինա։ Ուրուգվայ և Պարագվայ։ Կոլումբիա։ Էկվատոր։ Պերու։ Բոլիվիա։ Չիլի։

ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Եգիպտոս։ Երկիրն ու բնակիչները։ Եգիպտոսի քաղաքական պատմութիւնը։ Արքաներ, բուրգեր, սֆինքս, լաբիւրինթոս։ Գիր։ Կրօն։ Սովորոյթներ և այլն։

Բաղդէտ ու Ասորեստան։ Երկիրն ու բնակիչները։ Բաբելոն ու Նինուէ։ Պեղումներ։ Գիր։ Հին աւանդութիւնները՝ մարդու ստեղծագործութեան, Ջրհեղեղի և այլն։ Բաղդէտի ու Ասորեստանի քաղաքական պատմութիւնը։ Ճարտարապետութիւնը։ Արհեստները։ Կրօնը և այլն։

Մարաստան ու Պարսկաստան։ Երկիրն ու բնակիչները։ Համառօտ քաղաքական պատմութիւնը։ Կիւրոս։ Դարեհ Վշտասպեան։ Դարեհ Կոդոմանոս։ Պարսից պետութեան կործանումը։ Զրադաշտական կրօնը։ Կրթութիւնը, սովորոյթները։

Փիւնիկիա։ Երկիրն ու բնակիչները։ Գաղթականութիւնները (Կարթագեն)։ Փիւնիկեցոց նաւաշինութիւնը, գիւտերը, այբուբենը, առևտուրը և այլն։ Տիւրոսի ու Կարթագենի անկումը։

ՃՐԱՆՍԵՐԻՆ (3 ժամ)

Բանաւոր վարժութիւններ. բառեր ու խօսքեր՝ շրջապատին համաձայն ընտրելով։

Գրագիտութիւն։ Կանոնաւոր ընթերցանութիւն։ Համարել մինչև 1000։ Անգիր գի-

տենալ 3 ոտանաւոր։

Սովորել ուղղագրական բոլոր այն կանոնները, որոնք անհրաժեշտ են ուղիղ կարդալու համար։

Քերակ. — Ձայնաւորներ, բաղաձայներ ու երկբարբառներ։ Հասկացողութիւն քերականական սեռի մասին։ Անհանների նշանակութիւնը։

Գրաւոր։ Արտագրել անցած վարժութիւններն ու յոդուածները։ Նախապատրաստուած թելադրութիւն։

ՆԿԱՐԱԶՈՒԹԻՒՆ (1 ժամ)

Իրեղէններ։ Խոշոր կահ-կարասի։ Տան իրեր։ Ողկոյզներ։ Բարդու, ընկուզենու ճիւղեր՝ տերևներով։ Ամբողջ ծաղիկներ՝ խաշխաշ, պուտ, վայրի մեխակ, ձնծաղիկ և լն։ Փնջեր։ Այս առարկաներից մի քանիսը նկարել նաև յիշողութեամբ։

Ծանօթութիւն ճարտարապետական ոճերի։ Նկարել հայկական ոճի բնորոշ ու էական տարրերը։

Պարզ տեղեկութիւններ պլաստիք գեղարուեստի մասին։

ՁԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ (2 ժամ)

6 մաժոր ու 6 մինոր գամմաներ։ Մելոդիկ ու հարմոնիկ գամմաներ։ Ակկորդներ։ Կոնսոնանս ու դիսսոնանս։ Դիսսոնանսի լուծումը։ Լադեր։ Հասկացողութիւն հայկական երաժշտութեան կողմերի ու ձայների մասին։

Նոտաներով երգել վարժութիւններ ու զանազան եղանակներ։

ՁԵՒԱԳՈՐԾ ԵՒ ԿԱՐՈՒԶԵՒ (2 ժամ)

Ձեւագիտութիւն։ Չափ վերցնել։ Ծանօթութիւն զանազան կազմուածքների։ Սպիտակեղէնի ձևեր նկարել՝ մանկական լիֆչիկ, տղայի ու աղջկայ սպիտակեղէն, կանացի սպիտակեղէն և տակի լիֆչիկ. տղամարդու ներքնաշապիկ և լն։

Ձեւել։ Նկարները կտրել. սովորել ձևելու բոլոր կանոնները։ Ձևել կանացի շապիկ, լիֆչիկ, մանկական սպիտակեղէն ու տղամարդու շապիկ։

Մեքենայով կարել։ Ուղիղ թագալ, վրակար, ծալքակար (սկլադկա) և փոթ տալ։

Գործադրութիւն։ Մեքենայով կարել յիշեալ նիւթերը և նախշել ու զարդարել նախորդ դասարաններում սովորած զարդակերերով ու հաշիաներով։

Դ. ԴԱՍԱՐԱՆ

ԿՐՕՆԱԳԻՏ. ԵՒ ԵԿԵՂԵՑ. ՊԱՏՄՈՒԹ. (2 ժ.)

Քրիստոնէական կրօնի մորալը։ 1. Քրիստոնէութեան բարոյականի ծագումն ու հեղինակութիւնը։ 2. Քրիստոնէութեան իդէալը։ 3. Նախորդ բարոյականի էական սկզբունքները հաստատւում են։ 4. Քրիստոնէութեան բարոյականի ընդհ. պատուիրանները։ 5. Ընկերային կազմակերպութիւն։ 6. Անհատը։ 7. Ամուսնութիւն ու ընտանիք։ 8. Հարստութիւն ու աղքատութիւն։ 9. Հաւատաճաւալման գործը և Քրիստ. ճգնաւորութիւնը։ 10. Հատուցում։

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ պատմութիւնը։ ա) Հին, կամ կազմակերպութեան դար՝ Քրիստոնէութեան նախնական օրերից մինչև Հայկ. թուականի սկիզբը (551 թ.) կամ Դուինի բ. ժողովը։ բ) Միջին, կամ մաքառման դար՝ Դուինի բ. ժողովից մինչև Հայրապետական Աթոռի փոխադրութիւնը Ս. Էջմիածին (1441 թ.)։ գ) Նոր, կամ վերակենդանութեան դար՝ Աթոռի փոխադրութիւնից մինչև մեր օրերը։

ՀԱՅԵՐԷՆ (4 ժամ)

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ։ Կարդալ, պատմել ու վերլուծել դասագրքի թէ բանաստեղծական, թէ բանախօսական հատուածները և յօդուածները։ Հասկացողութիւն ոտանաւորի արտաքին կազմութեան մասին։ Շարադրութիւն ու նրա մասերի կազմութիւնը։ Պարզ գաղափար քնարական, վիպական ու դրամատիքական բանաստեղծութեան մասին։— Պիտի կարդան զանազան բանախօսական, գիտական, պատմական և այլ հատուածների հետ միասին նաև Աբովեանի, Պռօշեանի, Նազարեանի, Նալբանդեանի, Ազայեանի, Պատկանեանի, Շահազիզի երկերի հատուածներից, որոնք զետեղուած են դասագրքում։ Այս հեղինակների համառօտ կենսագրութիւնն ու գրական գործունէութեան արժէքը։ Անգիր անել 8 ոտանաւոր։

Բերակ.— Կարգաւորել ու ընդլայնել ստուգաբանութիւնից ու համաձայնութիւնից անցածները։ Հնչաբանութիւն—ձայնաւորների ու բաղաձայների ուղղագրութիւնը։

Գրաւոր։ Շարադրութիւն (առնուազն 15 հատ)՝ նիւթը վերցնելով առօրեայ կեանքից, կամ անցած յօդուածներից։ Յատակագծի (պլան) որոշումն ու փոփոխումը։

ԳՐԱԲԱՐ։ Կարդալ պարզ յօդուածներ ու

թարգմանել աշխարհաբարի։ Անցածն արտագրել ու թարգմանել։ Հասկացողութիւն գրաբարի քերականական մի քանի պարզ կանոնների մասին։ Անունների հոլովման 2—3 ձև։ Բայերի խոնարհումից՝ մի քանի շատ գործածական ժամանակներ։

Ծանօթ.— Ուելորդ ենք համարել ոչէ տարկայի համար մշտական դասագիրք որոշել՝ թողնելով այդ Մանկ. Խորհուրդին։

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Սելջուկների արշաւանքը։ Տուղրիլ բէկ ու Ալփասլան։ Արծրունեաց ու Բագրատունեաց թագաւորութիւնների անկումը։ Հայոց թագաւորների, նախարարների ու ժողովրդի գաղթելը։

Վրաստանի ուժեղանալը։ Իվանէ Աթաբէկ ու Զաքարիա Սպասալար։ Անին վրացիների ձեռքում։ Զալալէդդինի արշաւանքն ու Գառնիի կռիւը։

Թաթարներ։ Զարմագան։ Գուգարաց աշխարհի աւերումը։ Անին ու Կարսը թաթարների ձեռքում։ Թաթարներ ու Ռուբինեաններ։ Սելջուկների ու թաթարների փոխադարձ յարաբերութիւնները։ Թաթարական պետութեան կազմակերպութիւնը։

Ռուբինեան պետութեան ծագումը։ Յարաբերութիւններ խաչակիրների հետ։ Լեւոն Բ. թագաւոր։ Զաբել ու Հեթում Ա.։ Հեթումի հանապարհորդութիւնը Մեծ Խանի մօտ։ Ռուբինեան թագաւորութեան վերջին տարիները։ Յարաբերութիւններ Հռոմի հետ։

Լանկթիմուր։ Կոտորածներ Հայաստանում։ (Ղարաղոյուններ ու աղզոյուններ։ Քրդական պետութիւն։ Նոր Պարսկական ու Օսմանեան պետութիւնների ստեղծաւորութիւնը)։

Սէֆեան տուն։ (Օսմանցիների ու պարսիկների մաքառումը Հայաստանի համար)։— Շահ-Աբաս և հայերի գաղթը Պարսկաստան։ Կաթոլիկութեան մուտքը Հայաստան։

ԱՆԳԼԵՐԷՆ (4 ժամ)

Կարդալ ու պատմել դասագրքի յօդուածները։ Ոտանաւորը արձակով պատմել։ Անգիր անել 10 ոտանաւոր՝ մեծ ուշադրութիւն դարձնելով առոգանութեան վրայ։

Գիտենալ բոլոր մասն բանիները՝ իրանց գլխաւոր ոտորաբաժանումներով։ Անունների ու դերանունների հոլովման ու բայերի խոնարհման նորանոր կանոններ ու վարժութիւններ։ Նախդիրների գործածութեան գլխաւոր դէպքերը։

Արտագրել անցած յօդուածները։ Նա-

խապատրաստուած թելագրութիւն: Շարադրութիւն (10 հատ):

Անգլերէն լեզուով համառօտ տեղեկութիւններ տալ Անգլիայի պատմութիւնից: Տնային ընթերցման համար տալ փոքրիկ մանկական գրուածքներ (անգլ. լեզուով):

ԹՐԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Տոկոսների կանոն (մանրամասնօրէն): Մուրհակների զեղջ: Համեմատական բաժանման կանոն: Խառնուրդի կանոն: Օղակաւ կանոն: Դրամափոխութիւն: Խառը խնդիրներ՝ բոլոր անցած կանոններով:

ԱԼԳԵԲՐԱ (2 ժամ)

(անգլ. լեզուով)

Նախադիտելիք: Փակագծերի գործածութիւնը: Գումարում: Հանում: Բազմապատկում: Բաժանում: Ցարմուլաներ: Արտադրիչներ: Ամենամեծ ընդհանուր բաժանարար: Ամենափոքր բազմապատիկ թիւ:

ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ (1 ժամ)

(անգլ. լեզուով)

Նախագիտելիք: Կէտ. գիծ. մակերևոյթ. անկիւն. շրջան. եռանկիւնի. քառանկիւնի.

բազմանկիւնի: Զուգահեռական գծեր: Ակսիոմա, թէորեմա և լեմա:

Իւկլիդի ձեռնարկով անցնել 20 թէորեմա:

Հետազօտութիւն ուղիղ գծերի, անկիւնների: Եռանկիւնիների հաւասարութիւնը: Թեք գծերի յատկութիւնները:

ՊԱՐԱԿԵՐԷՆ (3 ժամ)

Կարդալ ու պատմել ընդարձակ յօդուածներ: Պատմել անգիր արածի բովանդակութիւնը: Անգիր անել 10 ոտանաւոր:

Անունների ու գերանունների հոլովման և բայերի խոնարհման գլխաւոր ձևերը: Հասկացողութիւն փոփոխական ու անփոփոխ մասին բանիների մասին:

Անցած յօդուածները արտագրել տետրակներում: Նախապատրաստուած թելագրութիւն: Շարադրութիւն (12 հատ):

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ (2 ժամ)

ԵՒՐՈՊԱ.

Ընդհ. տեսութիւն: Դիրքը: Մեծութիւնը: Ափերի գծագրութիւնը: Մակերևոյթի կազմութիւնը: Կլիման: Ֆլորա: Ֆաունա: Ազգաբնակութիւնը:

Պետութիւնները: Անգլիա: Գերմանիա: Ֆրանսիա: Ռուսաստան: Աւստրօ-Ունգարիա: Շվեցարիա: Դանեմարկ: Հոլանդիա: Բելգիա: Իտալիա: Շվեդ-Նորվեգիա: Սպանիա: Պորտուգալիա: Եւրոպական Տաճկաստան: Յունաստան: Բուլգարիա: Սերբիա: Ռումանիա: Չերնոգորիա: Բոսնիա ու Հերցեգովինա:

ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Յունաստան: Քաղաքները («պոլիս»). գաղթականութիւնները: Կրօնը: Ազգային տօնախմբութիւնները: Պոտգամախօսները: Գրականութիւնը: Սպարտա. Լիկուրգոս: Աթէնք. Սողոն: Յունական սովորոյթները: Պերիկլէս: Աղեքսանդր Մակեդոնացի: Սելեւկեաններ: Անտիոքոս Մեծ ևն (ընդարձակօրէն):

Հռոմ: Երկիրն ու բնակիչները: Ծերակոյտ ու Ազգային ժողով: Դասակարգերի կռիւ, Հաննիբալ ու Սկիպիոն Աֆրիկացի: Յուլիոս Կեսար ու եռապետներ: Օգոստոս: Ներոն: Սարկութիւն: Գլադիատորներ: Զօրքն ու Հռոմէական խաղաղութիւնը: Քրիստոնէութեան տարածուելը Հռոմէական կայսրութեան մէջ: Հալածանքներ: Վանական կեանքի սկզբնաւորութիւնը: Դիոկղեդիանոս ու Կոստանդին Մեծ: Քրիստոնէութեան յաղթա-

նակը (Նիկիոյ ժողովը): Կայսրութեան երկու մասի բաժանուելը: Արևմտեան Կայսրութեան անկումը:

ՖՐԱՆՍԵՐԷՆ (3 ժամ)

Կարդալ և ուսուցչի օժանդակող հարցերի օգնութեամբ պատմել դասագրքում զետեղուած յօդուածները: Անգիր անել 8 ոտանաւոր (2-ը Լաֆոնտենից):

Անունների ու դերանունների հոլովման մի քանի ձևեր: Խոնարհման վարժութիւններ՝ սահմանական գլխաւոր երեք պարզ ժամանակներով ու հրամայականով: Յօդերի գործածութիւնը:

Արտագրել անցած յօդուածները: Նախապատրաստուած թելադրութիւն: Գրաւոր պատասխաններ՝ ուսուցչի տուած հարցերին:

ՔԻԶԻԿԱ. (3 ժամ)

Նիւթ. ծաւալ. խտութիւն: Պարզ ու բաղադրեալ մարմիններ: Մասնիկ. հիւլէ: Մարմինների երեք վիճակը:

Մարմինների ընդհ. յատկութիւններ: Ծաւալականութիւն. անթափանցկութիւն. բաժանականութիւն. ծակոտկէնութիւն ևն:

Շարժում և ոյժ: Տարբեր ու նման շարժումներ: Իներցիա: Ոյժ ու դիմակայութիւն:

Եփումն: Դինամոմետր: Կենտրոնախույս զորութիւն և այլն:

Լծակ: Մեքենականութիւն: Լծակ և իր տեսակները: Ճախարակներ:

Զգողութիւն:

Ընկնող ու թեք դրութիւնից գլորուող մարմիններ:

Մասնական ձգողութիւն: Մազականութիւն և այլն:

Հաստատուն մարմինների յատկութիւններ: Անբաժանականութիւն, կարծրութիւն, տարածականութիւն և այլն:

Հեղուկ մարմիններ: Հեղուկների ճնշումն ու դիմակալութիւնը: Հեղուկների հաւասարակշռութեան պայմանները: Մարմինների որոշ դիրքը ջրում: Տեսակարար կշիռ: Օդաչափ:

Գազեր: Գազերի յատկութիւնը: Մթնոլորտ: Ծանրաչափ: Գազերի առաձգական ոյժը չափելը: Օդի յատկութիւնները ուսումնասիրելու գործիքներ: Մարմինների ճնշումը օդի մէջ: Օդապարիկ և այլն:

ԿԱՐՈՒՑԵԻ ՈՒ ՁԵՌԱԳՈՐԾ (2 կան ժամ)

Ձեւ: Նկարներ: Ձևել վրայի զգեստներ՝ շրջազգեստներ, աստառով ու առանց աստառի վերնազգեստներ, մանկական հագուստներ, վերարկուներ, ուսնոցներ, թև և այլն:

Ձևել ու կարել մանկական պարզ հագուստներ, կանացի պարզ շրջազգեստներ ու ամարային առանց աստառի վերնազգեստներ:

Հարթակար: Նկարների փոխադրութիւն. Եզրակար, ողակար, լեցք, սիւնեակներ, պարզ ծաղիկներ, աւազակար, կետակար և այլն: Հարթակար՝ ոսկեթելով:

Գործադրութիւն՝ ասեղնագործել կանացի և մանկական շապիկների կուրծքեր, օձիքներ, թևեր, գոգնոցի եզրեր, թաշկինակներ, ներքնազգեստներ և այլն:

Տանօք.— Հարթակարը սկսելիս՝ նախ՝ ողորեցնել ¼ արշին ապիտակ նուրբ կտորի վրայ՝ իրան յատուկ թելով:

Ե. ԴԱՍԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆ (4 ժամ)

Աշխարհաբար։ Կարդալ զանազան հատուածներ մեր նորագոյն հեղինակների երկերից. վերլուծել, որոշել տիպերը, կազմել խարաքտերիստիկա ևլն։ Ընթերցանութեան միջոցով ծանօթանալ Բաֆֆիի, Ս.Հարոնեանի, Յ. Թումանեանի, Վ. Փափազեանի, Յ. Յովհաննիսեանի, Լ. Մանուէլեանի, Ս. Ծատուրեանի, Ա. Խաչակեանի և այլ աչքի ընկնող հեղինակների գործերին։— Ընթերցում արևմտեան աշխարհաբարով շարադրուած կտորների՝ Ծերենցից, Յ. Պարոնեանից, Պ. Դուրեանից, Մ. Պեշիկթաշլեանից, Տիկին Սիպիլից ևլն։

Համեմատութիւն արդի գրական երկու բարբառների. նրանցից իւրաքանչիւրի առաւելութիւններն ու թերութիւնները։

Քերականութեան երեք մասերը (համաձայնութիւն, ստուգաբանութիւն և հնչաբանութիւն) կրկնել ամբողջացնել ու սիստեմատիզ անցնել դասագրքով։

Գրել 15 շարադրութիւն, խարաքտերիստիկա, փոխադրութիւն ևլն։ Նամակագրութիւն ու թղթակցութեան (կորրեսպոնդենցիա) գլխաւոր կանոնները։

Գրաբար։ Ընթերցանութիւն Ս. Գրքից (Աւետարան, կամ Գործք առաքելոց)։ Գրաւոր թարգմանութիւն՝ գրաբարից աշխարհաբար։ Անցնել անունների ու դերանունների հոլովումը, բայերի խոնարհումը (թէ կանոնաւոր, թէ անկանոն), նախդիրների գործածութիւնը ևլն։ Նախդիրների գործածութեան համեմատութիւնը աշխարհաբար ձևերի հետ։

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Մխիթար Սեբաստացի և Մխիթարեան միաբանութեան հիմնարկութիւնը։ Մխիթարեանների գործունէութեան նշանակութիւնը։

Ղարաբաղի մելիքներ։ Նրանց կազմակերպութիւնն ու վերաբերմունքը դէպի ժողովուրդը։ Յարաբերութիւն պարսիկների հետ։ Մելիքների արտաքին կեանքը (ամրոցները, զէնքերը ևլն) և փոխադարձ յարաբերութիւնները։ Ղարաբաղի մելիքների յարաբերութիւնը Պետրոս Մեծի հետ։ Իսրայէլ Օրի։ Դաւիթ բէկ։ Օսմանցիք նուաճում են Ղարաբաղը։ Ապստամբութիւն օսմանցոց դէմ և

պարսից իշխանութեան վերականգնումը։ Երկպառակութիւն մելիքների միջև։ Նուշին մահմեդականների ձեռքում։

Հայերի յարաբերութիւնները Եկատերինա Բ.-ի հետ։ Սիմէոն Կաթողիկոս։ Պատեմկինի ծրագիրը։ Աղամահմադ Խանի արշաւանքը։ Ռուսների մուտքը Անդրկովկաս և Վրաստանի ու Ղարաբաղի միացումը։

Ռուսների պատերազմները պարսիկների ու տաճիկների դէմ։ Հայերի բռնած դիրքը այդ պատերազմներում։ Հայերի արտագաղթը Պարսկաստանից ու Տաճկաստանից։ Հայոց Եկեղեցու կազմակերպութիւնը բռա պոլժենիայի։

Թանզիմաթ։ Ազգային Սահմանադրութիւն։ Մասնաւոր կաթողիկոսութիւններ ու Երուսաղէմի Պատրիարքութիւնը։

Ռուս-Տաճկական վերջին պատերազմը Բերլինի վեհաժողովի վճիռները։ Տաճկահայ դատը։

Կրթական գործ և բարեգործական հիմնարկութիւններ։

Անդրկովկասի կառավարիչները 19-րդ դարում։ Ցիցիանով։ Վորոնցով։ Մեծ իշխան Միխայէլ Նիկոլայևիչ։ Գոլիցին։ Վերաբերմունք դէպի հայերը։ Ռուսահայերի կրթական ու քաղաքական զարգացումը։

Պարսկահայերը։ Նրանց քաղաք., տնտեսական ու կրթական վիճակը (ընդարձակօրէն)։

Համառօտ հայեացք հայոց զաղթականութիւնների վրայ։ Լեհաստանի և Հնդկաստանի հայերը։ Նորագոյն զաղթականութիւններ։

ԱՆԳԼԵՐԷՆ (4 ժամ)

Աշակերտները դասագրքի ընդարձակ յօդուածները առաջին անգամից պիտի կարողանան տնտալիթաք կարդալ և ազատ պատմել։ Անգիր անել 12 ոտանաւոր և գրանց բովանդակութիւնը պատմել արձակով։ Առանձին ուշադրութիւն դարձնել առոգանութեան վրայ։

Նախադրների գործածութիւն նորանոր դէպքեր։ Անկանոն հոլովում ու անկանոն խոնարհում։ Ցուցադրել հայերէնի ու անգլերէնի խնդրառութեան ու հոլովների գործածութեան տարբերութիւնները։

Դասագրքից արտագրել արժէքաւոր ու գեղեցիկ կտորներ։ Թելագրութիւն (նաև՝ յանպատրաստից)։ Առնուազն 15 շարադրութիւն՝ զանազան նիւթերի մասին։

Սովորեցնել նամակագրութեան մի քանի ձևեր։ Դասի ժամանակ միմիայն անգլերէն պիտի խօսեն՝ թէ ուսուցիչը, թէ աշակերտները։

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ (1 ժամ)

(անգլ. լեզուով)

Կրկնողութիւն ու ամփոփում նախորդ դասարաններում անցածների.—

Հասկացողութիւն թուի մասին։ Վերացական ու անուանական թուեր։ Ամբողջ ու կոտորակ թուեր։ Բերանացի և գրաւոր թուարկութիւն։ Հռովմայեցոց գրաւոր թուարկութեան բովանդակութիւնը։ Գործողութիւններ ամբողջ թուերով։ Պարզ ու բարդ անուանական թուեր։ Թուերի բաժանականութիւնը։ Կոտորակներ։ Տասնորդական կոտորակներ։ Յարաբերութիւն. համեմատութիւն։ Պարզ ու բարդ երից կանոններ։ Տոկոսների կանոն։ Պարզ ու բարդ տոկոսներ։ Մուրհակների զեղչման կանոն։ Օգակապ կանոն։ Ընկերութեան կանոն։ Խառնուրդի կանոն։ Քառակուսի ու խորանարդ արմատներ։

Օտար պետութիւնների դրամական դրութիւնը։ Դրամափոխութիւն։

Անցած բոլոր կանոնների հիման վրայ՝ խառը խնդիրների վարժութիւններ։

ԱԼԳԵԲՐԱ. (2 ժամ)

(անգլ. լեզուով)

Ալգեբրայական կոտորակների գումարումը, հանումը, բազմապատկումը և բաժանումը։ Զորս գործողութիւններով՝ խառը խնդիրներ։ Առաջին աստիճանի հաւասարութիւն՝ պարզ խնդիրներով։

ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ (2 ժամ)

(անգլ. լեզուով)

Իւկլիդի առաջին գրքից՝ 20—40րդ թէորեման։ Հետազօտութիւն զուգահեռական գծերի։ Նրանց մի քանի հետևանքները։ Զուգահեռականների ու սեղանանմանների մասին— Պիւթագորոսի թէորեման։

Իւկլիդի երկրորդ գրքից՝ նախագիտելիք։ Անցնել 1—7րդ թէորեման։ Հետազօտութիւն ուղղանկիւն ու քառակուսի մակարդակների։

ՊԱՐԱԿԵՐԷՆ (3 ժամ)

Կարդալ ընդարձակ յօդուածներ ու ընտիր հատուածներ պարսից նշանաւոր բանաստեղծների գրուածքներից (Սէէդի, Հաֆէզ, Օմէր-Խէյեամ, Ֆիրդոսի և լն)։ Այս հեղինակների ոտանաւորներից անգիր անել 12-ի չափ։ Ոտանաւորի բովանդակութիւնը պատմել՝ պարզաբանելով ու ընդարձակելով։

Գոյականների հոլովումն ու բայերի խոնարհումը անցնել աւելի ևս մանրամասնելով՝ սովորեցնելով նաև դոցա զարուզրութիւնները։

Արտագրել դասագրքով անցած հատուածները՝ ուշք դարձնելով դեղեցիկ գրութեան վրայ։ Թելագրութիւն՝ յանպատրաստից։ Շարադրել՝ նիւթ վերցնելով առօրեայ կեանքից, կամ դասագրքով անցածից (15 հատ)։ Գեռագրերի ընթերցում։ Նամակագրութեան գլխաւոր ձևերի վարժութիւններ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (2 ժամ)

ՄԻՋԻՆ ԴԱՐ

Միջնադարեան աշխարհի կազմուելը։ Ազգերի գաղթականութիւնը։ Կայսրութիւնը Զ-Ը դարերում։ Իսլամ։ Բարբարոսների թագաւորութիւններն ու Կարոլինգեան միապետութիւնը։

Աւատական դարաշրջան։ Աւատականութիւն։ Կայսրութիւն ու Պապութիւն։ Խաչակրաց արշաւանքներ։ Միջնադարեան քաղաքակրթութիւն։

Նոր Եւրոպական տէրութիւնների կազմուելը։ Անգլիա։ Ֆրանսիա։ Պիրենեան թերակղզի։ Իտալիա։ Գերմանիա։ Սկանդինաւեան

տէրութիւններ։ Լեհաստան և Հունգարիա։ Բալկանեան թերակղզի։

Վերածնունդ։ Եկեղեցի։ Գրականութիւն։ Արուեստ ու գիտութիւն։ Գիւտեր ու յայտնագործութիւններ։

ՔԱՆԱՍԵՐԻՆ (3 ժամ)

Կարդալ ու պատմել դասագրքում զետեղուած յօդուածները։ Անգիր անել 8 ոտանաւոր, որոնց բովանդակութիւնը պատմել արձակով։

Գաղափար տալ բոլոր մասն քանիների մասին՝ թէ փոփոխական, թէ անփոփոխ։ Ընդարձակել բայերի խոնարհումն ու գոյականների հոլովումը։ Համանիշ և հոմանուն բառեր։ Անցնել անկանոն բայերի մի մասը (12—15 հատ)։

Արտագրել դասագրքով անցած արժէքաւոր յօդուածները։ Գրել անգիր արածը։ Նախապատրաստուած թելագրութիւն։ Գրաւոր պատասխաններ՝ ուսուցչի հարցերին և փոքրիկ շարադրութեան վարժութիւններ՝ նիւթը դասարանում նախօրօք մշակելով։

ԲԱՆԱՀԻՍՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Ընդհանուր տեսութիւն։ Գիտութիւն և

արուեստ։ Ճարտարարուեստ ու գեղարուստ։ Գեղարուեստի տեսակները։ Բանահիւսութիւն։ Բանախօսութիւն ու բանաստեղծութիւն։ Բանահիւսութեան տեսութիւնն ու պատմութիւնը։

Ոճ։ Ոճի տրամաբանական կողմը՝ պարզութիւն, ճշտութիւն։ Ոճի գեղարուեստական կողմը՝ պատկերաւորութիւն. երաժշտականութիւն։ Տաղաչափութիւն։ Երկրաբանութիւններ։

Բանախօսութեան տեսութիւն։ Շարադրութիւն։ Նկարագրական բանախօսութիւն։ Մասնաւոր ու ընդհանուր նկարագրութիւն. ուսումնական ու գեղարուեստական նկարագրութիւն։ Բարդ նկարագրութիւն։ Պատմողական բանախօսութիւն։ Տարեգրութիւն. պատմական յիշատակարան. պատմութիւն. կենսագրութիւն։ Վարդապետական բանախօսութիւն։ Խորհրդածութիւն. քննադատութիւն. գիտութիւն. պերճախօսութիւն և իւր տեսակները։

Բանաստեղծութեան տեսութիւն։ Գեղեցկի տեսակները։ Քնարական բանաստեղծութիւն։ Զգացմունքի արտայայտման եղանակները։ Ներբող. երգ. եղերերգ. երգիծաբանութիւն։ Վիպական բանաստեղծութիւն։

Առասպել ու հեքիաթ. կենդանական վէպ. վիպասանական երգ. առակ. պարերգ. հովուերգ. դասական վէպ. կեղծ դասական վէպ. վէպ ու վիպակ։ Դրամատիկական բանաստեղծութիւն։ Ողբերգութիւն. դասական Յունաստանի ողբերգութեան բնորոշող կողմերը. նոր ողբերգութիւն. դրամա. կատակերգութիւն։

ՔԻԶԻԿԱ. (3 ժամ)

ՁԱՅՆ։ Ձայնի առաջանալու պատճառները. օդի ալիքաւորումը. ձայնի անդրադարձումը։

Ձայնի առաջացրած ալիքները օդի մէջ։ Տարբեր ձայների լսուելը։ Ձայնը անցնում է հաստատուն ու հեղուկ մարմինների միջով։ Ձայնի ընթացքի արագութիւնը՝ գանագան մարմինների միջով։ Արձագանք։ Ձայնի ուժգնութիւնը։ Ձայնը խողովակների մէջ՝ շեփորներ ու լսողական գործիքներ (ձայնամփոփ)։

Երաժշտական ձայն։ Կանոնաւոր ու անկանոն ձայների տարբերութիւնը։ Երաժշտական ձայների բնոյթն ու յատկութիւնը։ Ձայնի թրթռացումների աստիճանը։ Ձայնասանդուղք. ութնեակներ։ Կիսաձայներ։ Նոտաների թրթիռների թիւը. ձայնատու։ Դիսոն-

նանս և կոնտոնանս։

Լարերի թրթռացում՝ շփումով։ Լարաւոր գործիքներ։

Փչելով առաջացած ձայներ։ Փչուող նուագարաններ։

Մարդկային ձայն։

ՏԱՔՈՒԹԻՒՆ։ Տաքութեան ընդհանուր ազդեցութիւնը։ Ջերմաչափ։ Տաքութեան Լուսթիւնը։ Զանազան տեսակի ջերմաչափներ։ Տաքութեան ցոլացումն։ Տաքութեան անդրադարձումը։ Հաստատուն, հեղուկ ու գազային մարմինները՝ իբրև տաքութեան հաղորդիչներ։ Տաքութեան ազդեցութիւնը մարմինների ծաւալի վրայ։ Գազերի կազմը և ցընդում։ Ոգիների ու գազերի հեղուկացումը։ Տաքութեան համեմատական չափը։ Նոդեմոքենայ։ Խոնաւաչափ։ Հեկրոսկոպ. հեկրոմետր։ Օդերևոյթներ։ Միջին բարեխառնութիւն։ Տաքի ու ցրտի պատճառները։

Մագնիսականութիւն։ Մագնիսը և իր յատկութիւնները։ Բնական մագնիս։ Կենտրոնաձիգ զօրութիւն ու բևեռների ոյժը։ Արհեստական մագնիս։ Կողմնացոյց։ Մագնիսի գործածութիւնը։

ԱՆԳԼԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (2 ժամ)

(անգլ. լեզուով)

Հին բրիտանացիք ու նրանց կրօնը։ Հռովմայեցոց արշաւանքը։ Անգլներն ու նրանց կրօնը։ Անգլների յաղթութիւնները։ Անգլիացիք քրիստոնեայ են դառնում։ Անգլիայի միութիւնը։ Պանիսական ապստամբութիւններ։ Ալֆրեդ Մեծը։ Հենրի Ա.։ Հենրի Բ.։ Ռիչարդ Ա.։ Մագնա Զարտան։ Ռիչարդ Բ. և դիւզացիական ապստամբութիւն։ Հենրի Գ.։ Հենրի Ե.։ Հենրի Զ.։ Էդուարդ Գ.։ Էդուարդ Ե.։ Ռիչարդ Գ.։ Հենրի Է.։ Հենրի Ը.։ Էդուարդ Զ.։ Մերի ու Լէդի Ջէյնն։ Էլիզաբեթ։ Ջէյմս Ա.։ Զարլս Ա.։ Զարլս Բ.։ Ջէյմս Բ.։ Վիլիամ Բ.։ Աննա թագուհի։ Զորջ Ա.։ Զորջ Բ.։ Զորջ Գ.։ Զորջ Դ.։ Վիլիամ Դ.։ Վիկտորիա։ Յորենի օրէնքը։ Արևելեան հարցը։ Ղրիմի պատերազմը։ Հնդկական ապըստամբութիւն ևն։

Էդուարդ Է.։ Զորջ Ե.։

Մանօր.— Պատմութիւնը չպիտէ կրէ թագաւորների ու նրանց կենցաղի նկարագրութեան ընոյթ, այլ ժամանակագրական կարգով պիտի պարզաբանուին պատմական անցքերը, նրանց պատճառներն ու հետեւանքները ևն։ Այս նպատակով են դրուած թագաւորների անունները։

ԱՆԳԼԻԱՅԻ ՈՒ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ (1 ժամ)

(անգլ. լեզուով)

ԱՆԳԼԻԱ։ Բրիտանական կղզիները։ Անգլիա ու Վէյլզ։ Մակերևոյթի կազմուածքը։ Լեռները։ Գետեր։ Կլիմա։ Ազգաբնակութիւնը։ Վաճառականութիւն։ Կառավարութիւն։ Ազգային բնաւորութիւն։ Կրօն։ Վաճառական ու մանուֆակտուրային քաղաքներ։ Նշանաւոր վայրերը։

Սկովտիա և Իրլանդիա՝ իրանց գլխաւոր քաղաքներով։

Բրիտանական կալուածներ՝ հինգ մայր ցամաքներում։

ՀՆԴԿԱՍՏԱՆ։ Տարածութիւնը։ Բնական բաժանումները։ Կղզիները։ Ափերը։ Հրուանդանները։ Լեռները։ Սարահարթերը։ Դաշտավայրերը։ Գետերը։ Կլիման։ Հանքերը։ Բուսականութիւնը։ Կենդանիները։ Ազգաբնակութիւնը։ Լեզուները։ Արդիւնաբերութիւնը։ Առևտուրը։ Կրօնները։ Կառավարութիւնը։ Անկախ շտատներ։ Օտար կալուածներ։ Գլխաւոր քաղաքները։ Յեյլոն։

ԿԱՐՈՒՉԵՒ ԵՒ ՉԵՌԱԳՈՐԾ (2 կան ժամ)

Կար։ Վերնազգեստներ՝ աստառով վերևներ (կոֆտա) ու շրջազգեստներ։ Հաշիների ու մետաքսէ կտորների գործածութիւն։ Տարազաթերթերից օրինակել պարզ ձևեր։

Շեղ ձեռագործներ։ Հարթակար՝ սպիտակեղէնի վրայ (աւելի քարդ ձևեր)։ Կոնգրէսի (կանաչ) վրայ զանազան կարեր՝ իրանց յատուկ թելերով։ Պատրաստել զանազան նիւթեր՝ ծածկոցներ, անձեռոցիկներ, գարժկաներ և այլն։— Ֆիլէյ կար։ Հարթակար՝ ոսկեթելով։

Զ. ԴԱՍԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆ (4 ժամ)

Աշխարհաբար: Կարդալ հատուածներ՝ Շիրուանզադէի, Շանթի, Սունդուկեանի, Մուրացանի, Շ. Կուրղինեանի և ուսուահայ ուրիշ ականաւոր հեղինակների գրուածքներից. այլև՝ այն հեղինակներից, որոնց գործերից կարդացել են նախորդ դասարաններում:— Մխիթարեան միաբանութիւն և նրա գրական գործունէութեան արժէքն ու ականաւոր գրական գործիչները:

Ծանօթութիւն տաճկահայ ականաւոր գործիչներին ու նրանց երկերին— Յ. Պարոնեան, Մ. Պէշիկթաշլեան, Պ. Դուրեան, Տիկին Սիպիլ, Տեմիրճիպաշեան, տ. Տիւսաբ և այն:

Ամփոփում և ընդհանուր տեսութիւն մեր նորագոյն գրականութեան:— Գրաբարի ու աշխարհաբարի քերականական ձևերի բաղդատութիւն:— Աշխարհաբարի ծագումն ու զարգացումը:

Գրել 15 շարադրութիւն, խարաքտերիստիկա և այլն՝ ուշք դարձնելով նաև շարադրութեան արտաքին կողմի և նիւթի գարգացման եղանակի վրայ:

Գրաբար: Կարդալ ու թարգմանել Եզնիկից մի գլուխ (Եղծ Քէշին պարսից, կամ ուրիշը): Գրաւոր թարգմանութիւն գրաբարից աշխարհաբար:

Գրաբարի համանայնութիւնը: Եղանակների ու ժամանակների գործածութիւն: Բայ ու ենթակայ: Բայ ու լրացուցիչներ: Գոյականների ու ածականների խնդրառութիւնը: Նախադրութեան խնդրառութիւնը: Բայ ու պարագայական բառեր: Յատկացուցիչ ու յատկացեալ: Բացայայտիչ ու բացայայտեալ: Որոշիչ ու որոշեալ: Դիմորոշ յօդեր և այն:

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (2 ժամ)

Անգիր բանահիւսութիւն: Գուսանական երգեր՝ Հայկ ու Բէլ. Սրա ու Շամիրամ. Արտաշէս ու Սաթենիկ. Վիշապաղուններ. Արտաւազդ. Տորք Անգեղ. Վահագն: Սասմայ ծռեր: Ժողովրդական նորագոյն անգիր բանահիւսութիւն՝ հեքիաթներ, երգեր և այն.

Գրականութիւն: Սեպաձև գրեր: Հայկական նշանագրեր ու մեհենական գրականութիւն: Նախաքրիստոնէական շրջանի գրականութիւնը: Գ. Լուսաւորիչ: Ագաթանգեղոս: Զենոբ Գլակ: Փ. Բիւզանդ: Պրոյերեսիոս:

Մեծն Ներսէս։ Վռամշապուհ։ Սահակ ու Մեսրոպ։ Գրութեան տեխնիքական կողմը նախկին դարերում։ Կորիւն։ Եղնիկ։ Դաւիթ Անյաղթ։ Եղիշէ։ Ղազար Փարպեցի։ Մովսէս Խորենացի։ Տիեզերական ժողովներ։ Մովսէս կաթող. Եղուարդացի։— Արաբական արշաւանքներ ու արաբական լեզուի ազդեցութիւնը հայերէնի վրայ։ Անանիա Շիրակացի։ Սեբէոս։ Մովսէս Կաղանկատուացի։ Ղևոնդ երէց։ Յովհաննէս կաթողիկոս։ Թոմա Արծրունի։ Ասողիկ։ Ս. Լաստիվերտցի։ Գ. Նարեկացի։ Գ. Մագիստրոս։— Արծաթէ դար։ Ն. Շնորհալի։ Ն. Լամբրոնացի։ Մխիթար Հերացի։ Մխիթար Գոշ։ Մատթէոս Ուռհայեցի։ Կիրակոս Գանձակեցի։— Աշխարհիկ բանաստեղծութիւն։ Միջնադարեան տաղերգուներ։ Նահապետ Քուչակ։ Թոմա Մեծոփեցի։ Առաքել Դավրիժեցի։— Մխիթարեան միաբանութիւն։

ԱՆԳԼԵՐԷՆ (4 ժամ)

Ազատ կարդալ ու պատմել դասագրքի յօդուածներն ու տրուած ընթերցանութեան գրքերը. պատմել սրանց բովանդակութիւնը։ Կարդալ փոքրիկ կտորներ անգլիական ականաւոր բանաստեղծներից՝ Շեկսպիրից, Բայրընից,

Թ. Մուրից, Դիկկենսից, Վ. Սկոտից և լն։ Ամփոփել, կրկնել ու ամբողջացնել անգլերէնի ստուգաբանութիւնն ու հնչաբանութիւնը։

Արտագրել վերև յիշուած հեղինակների երկերից ընտիր կտորներ։ Յանպատրաստից թելադրութիւն։ 15 շարադրութիւն՝ զանազան նիւթերի շուրջը։ Կորրեսպոնդենցիայի (թղթակցութիւն) գլխաւոր ձևերն ու կանոնները։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (2 ժամ)

ՆՈՐ ԴԱՐ

Բարեկորգութիւն։ Բարենորոգութիւնը Գերմանիայում։ Բարենորոգութիւնը Արևմտեան ու Հիւսիսային Եւրոպայում։ Կաթոլիկական յետաշրջութիւն։ Արուեստ, գրականութիւն ու գիտութիւն։

Հին վիճակ։ Անգլիա։ Ֆրանսիայի գերակշռումն։ Պրուսիայի բարձրանալը։ Խորհրդարանական սուղիշխանութիւն Անգլիայում ու Ամերիկայի ազատութիւնը։ Հին վիճակի հասարակութիւնը։ Գրականութիւն ու նրա ազդեցութիւնը։

Յեղափոխութիւն։ Միապետութեան անկումը Ֆրանսիայում։ Ֆրանսիական հասարակապետութիւն։ Նապոլէոն։

Տասնեւիններորդ դար։ Ցետաշրջումն ու աղատականութիւն։ Ազգային բարեփոխութիւնների դարաշրջան։

ՊԱՐՍԿԵՐԷՆ (3 ժամ)

Ընթերցում պարսից ականաւոր բանաստեղծների երկերից։ Ընթերցում նորագոյն պարսկերէնով գրուած յօդուածների։ Անգիր անել 6 ընտիր ոտանաւոր։

Լրացնել ու ամփոփել ստուգաբանութիւնն ու բառակազմութիւնը։ Հին ու նոր պարսկերէնի էական տարբերութիւնները ցոյց տալ։

«Շէքէստէ» շրիֆտ. ընթերցումն ու գրութիւնը։ Կորրեսպոնդէնսի, պայմանագրերի ու այլ գրութիւնների ընդօրինակութիւններ։ Ինքնուրոյն կերպով մշակելով՝ գրել 8 շարադրութիւն՝ նիւթը վերցնելով անցած յօդուածներից, կամ շրջապատից։

ԱԼԳԵԲՐԱ (2 ժամ)

(անգլ. լեզուով)

Առաջին աստիճանի հաւասարութիւններ՝ բարդ խնդիրներով։ Երկրորդ աստիճանի հաւասարութիւններ՝ պարզ ու բարդ խնդիրներով։ Քառակուսի արմատ։ Խորանարդ արմատ։ Ցարաբերութիւն։ Համեմատութիւն։

ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ (2 ժամ)

(անգլ. լեզուով)

Իւկլիդի Բ. գրքից՝ 7—14 առաջարկութիւնը։ Հետազօտութիւն ուղղանկիւնիների ու քառակուսիների մակարդակների։

Նոյն դասագրքի Գ. մասը անցնել ամբողջովին (1—37 առաջ.)։

Այդ դասագրքի նախագիտելիքը։ Հետազօտել շրջանների յատկութիւնները։ Լարեր շօշափող գծեր։ Անկիւն չափելը։ Ցարաբերական գծեր շրջանի մէջ։ Շրջանների ներսն ու դուրսը գծած բազմանկիւնիներ։ Երկու շրջապատների փոխադարձ դրութիւնը։

ՖՐԱՆՍԵՐԷՆ (3 ժամ)

Կարդալ ու պատմել դասագրքի յօդուածները։ Անգիր անել 6 ոտանաւոր՝ ֆրանսիական աչքի ընկնող բանաստեղծներից (Վ. Հիւգոյ, Սլֆրէդ դը Վինէ, Սլֆրէդ դը Միւսէ, Լամարտին և այլն։)

Լրացնել ու ամփոփել ստուգաբանութիւնն ու բառակազմութիւնը։ Վերջացնել բոլոր անկանոն բայերը։

Վերև յիշուած հեղինակների գործերից ընտիր կտորներ արտագրել։ Թելադրութիւն։ 6 փոքրիկ շարադրութիւն։

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ (3 ժամ)

Տարական հոգեբանութիւն ու տրամաբանութիւն։ Մարդու հոգեկան բնութիւնը։ Հոգեկան կեանքի ընդհ. պայմանները։ Գիտակցութիւն և ուշադրութիւն։ Հոգեկան կարողութիւններ։ Հոգու գիտակցական գործունէութիւնը։ Զգացողութիւն։ Մտապատկեր։ Յիշողութիւն։ Ստեղծագործական երևակայութիւն։ Դատողութիւն ու մտածողութիւն։ Եզրակացութիւն։ Լեզու։ Զգացումներ։ Կամք։

Ուսուցում։ Դաստիարակիչ ուսուցում։ Ուսուցման մեթոդներ։ Ուսուցման ձևեր։ Գիտելիք հաղորդող միջոցներ։ Գիտելիք ամրապնդող միջոցներ։ Դպրոցական կարգապահութիւն։

Դպրոց։ Դպրոցի արտաքին կազմակերպութիւնը։ Դպրոցի ներքին կազմակերպութիւնը։

Մեթոդիկա։ Մայրենի լեզու։ Օտար լեզուներ։ Թուաբանութիւն։ Պատմութիւն։ Աշխարհագրութիւն։ Նկարչութիւն և ն։

ՔԻՄԻԱ. (2 ժամ)

(անգլ. լեզուով)

Նիւթ։ Նիւթի երեք վիճակները։ Նիւթի անեղծականութիւնը։ Պարզ մարմիններ։ Քիմիական նշանակներ։ Մետաղակերպեր ու մետաղներ։

Ոյժ։ Ֆիզիքական ու քիմիական ոյժ։

Քլորաջրածնական թթու և իր յատկութիւնները։

Խառնուրդ ու քիմիական բաղադրութիւն։ Աւազ։ Շաքար։ Վառօդ։ Ծծումբ ու երկաթի խարտուած։ Քիմիական միացում ու վերլուծութիւն։ Տաքութիւն ու լոյս առաջանալը քիմիական միացումից։

Քիմիական վերլուծութիւն՝ անգլական թթուկի, քլորատ դը պոտասի, ջրի ու քլորաջրածնական թթուի։

Ջուր։ Բաղադրութիւնը։ Ջրածին։ Ջրածնի յատկութիւնները։ Կոշտ ու կակուղ ջուր։

Այրում։ Օդի անհրաժեշտութիւնը այրումի համար։ Այրուող նիւթեր՝ ածուխ, ջրածին, ծծումբ և ն։

Թթուացում։ Երկաթի ժանգ։ Սրա տարբաղադրութիւնը և ն։

Ածխաթթուս գազ։ Յատկութիւնները։ Կենդանական կեանքի վրայ ունեցած ազդե-

ցութիւնը։ Ենչառութիւն։

Օդ։ Թթուածին ու բորակածին։ Ածխաթթու

՝ օդի մէջ։ Օդաւէտում։ Բոյսերի ազդեցութիւնը օդի վրայ ևն։

ՔԻԶԻԿԱ. (3 ժամ)

Լոյս։ Լոյսի ուղղուելը տարածութեան մէջ։ Ճառագայթ. ստուեր. Ֆոտոմետր։ Լոյսի թափանցումն։ Հայելիներ։ Պատկերների կազմուելը։ Զանազան ձևի հայելիներ։ Ֆոկուս։ Ճառագայթների բեկումն և բեկման օրէնքներն ու նիւթերը։ Բեկող մարմիններ։ Պրիզմա։ Ոսպնապակի։ Երկուռուցիկներ։ Լոյսի վերլուծութիւնը։ Սպեկտրում։ Նիւտոնի թէորիան։ Գոյների բաղադրութիւնը ևն։ Գոյների հետևանքը ոսպնապակու վրայ։ Սխրոմատիզմ ու խրոմատիզմ։ Գիտակներն ու իրանց տեսակները։ Լուսանկարչութիւն։ Ակնոցներ ևն։

Ելեfsrականութիւն։ Ելեքտրական ոյժ։ Ելեքտրոն թաղէս։ Կայծակ։ Գրական ու բացասական ոյժեր։ Ելեքտրացող մարմիններ և առաջացած երևոյթները։ Ելեքտրականութեան բնաւորութիւնը։ Ելեքտրական մեքենայ։

Էլեդնեան շիշ։ Էլեդնեան բարդ։ Գալուանականութիւն։ Գալուանազօծումն ու Գալ-

ուանաձուլումն։ Զանազան բատարիաներ։ Ելեքտրամագնիս։ Հոսանքների ուղղութիւնն ու երևոյթը։ Հեռագիր։ Մեքենայ։ Ֆոնոգրաֆ։ Տելեֆոն։ Անթել հեռագիր։ Ռէօնդկենի ճառագայթներն ու նրանց ազդեցութիւնը։ Ելեքտրականութիւնը բժշկականութեան մէջ։ Ելեքտրականութիւնը իբրև ոյժ մեքենագիտութեան մէջ։ Կենդանական ելեքտրականութիւն ու. մագնիս։

ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ (2 ժամ)

(անգլ. լեզուով)

Ապառիկ վաճառումների տետրակ։ Ապառիկ գնումների տետրակ։ Կանխիկ գնումների ու վաճառումների տետրակ։ Մուրհակների տետրակ։

Օրհաշիւ։

Ամբարի հաշիւ։ Ստացուածքի հաշիւ։ Հաշուեկշիռ։ Օգուտ և վնաս։

Կրկնատոմար։ Մայր հաշիւ։

Ապառիկ վաճառումների տետրակից փոխանցում ի մայր հաշիւ։ Փոխանցում ապառիկ գնումների տետրակից։ Փոխանցում կանխիկ գնումների ու վաճառումների տետրակից։ Փոխանցում մուրհակների տետրակից։ Առևտրական կորրեսպոնդանս։

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ (2 ժամ)

1. Կերակուր: Բնածխային, բորակածնային ու հանքային կերակուրներ: Սննդառութիւն: Կերակրի աղբիւրներ:

2. Հագուստ: Նշանակութիւնը, պատրաստելը, մաքրութիւնը եւն:

3. Լուացք: Լուացքի նիւթեր: Հարթուկել եւն:

4. Օդ և իւր բաղադրութիւնը: Շնչառութիւն: Սենեակների օդաւէտում եւն:

5. Ջեռուցում: Ջերմութեան կանոնաւորութիւնը: Այրելի նիւթեր՝ փայտածուխ, հանքածուխ, նաւթ եւն:

6. Մարմնի մարմրութիւնը: Զրի գործածութիւնը: Մորթն և իւր ծակոտիները: Մազերը եւն:

7. Տունը մարել: Յատակը սրբել: Խոզանակել: Կահ-կարասին մաքրել: Զանազան մետաղներից շինուած անօթներ մաքրել եւն:

8. Կերակուր պատրաստել: Միսը խորովել, խաշել, տապակել եւն: Զկնեղէն: Բանջարեղէն: Թխուածքներ ու քաղցրաւենիք: Ե՛րբ, ո՛րքան և ինչպէս ուտել: Սեղանի կարգը. քաղաքավարութիւն եւն:

9. Առողջութիւն եւ հիւանդութիւններ: Առողջապահիկ օրէնքներ: Հիւանդութեան

պատճառները՝ կերակուրը, ջուրը, օդը, հագուստը, նորաձեւութեան անկանոնութիւնները ու աւելորդութիւնները, ալքոհոլը, անզգուշութիւնը եւն: Զանազան հիւանդութիւններ՝ ուղեղի, թոքերի, աչքերի, ականջների եւն եւն: Հիւանդին խնամելը:

10. Եկամուտ եւ ծախս: Ծախսել և խնայողութիւն: Խնայողական բանկեր:

ԿԱՐՈՒՑԵՒ ԵՒ ՁԵՌԱԳՈՐԾ (2ական ժամ)

Կար: Տարազաթերթերից ընդօրինակել մանկական ու կանացի ամեն տեսակ հագուստների ձեւեր:

Շեղ ձեռագործ: Հարթակաւ՝ մետաքսեայ գունաւոր թելերով՝ սպիտակ կտորի վրայ: Զանազան ձեռագործներ՝ թաւիշի, մահուդի ու մետաքսեայ կտորների վրայ: Հարթակաւ՝ ոսկեթելով:

Հարթուկել՝ սպիտակեղէն, վերնազգեստներ ու ձեռագործներ:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ

Մարմնամարզութեան նշանակութիւնը շատ մեծ է սաների թէ ֆիզիքական, և թէ հոգեկան զարգացման տեսակէտից։ Մարմնամարզութիւնը մշտական մի աղբիւր է երեխաների կենսուրախութեան և ոյժերի թարմութեան, որոնք անհրաժեշտ պայման են մտաւոր նորմալ զարգացման համար։ Աւելի ևս նշանակալից է մարմնամարզութեան բարերար ազդեցութիւնը կամքի վրայ. նա սովորեցնում է երեխաներին ուշադիր լինել և ներդաշնակել հոգեկան ու ֆիզիքական շարժումները։

Մարմնամարզութիւնը նոյնքան անհրաժեշտ է աշակերտուհիների համար ևս, որոնք աւելի հանդարտաբարոյ և աշխոյժից զուրկ լինելով՝ աւելի ևս կարիք ունին ֆիզիքական մարզանքի։

Մարմնամարզութիւնը կարելի է երեք մասի բաժանել՝ ա) մարմնամարզական խաղեր, բ) ընդհանուր վարժութիւններ և գ) դրծիքներով վարժութիւններ։ Լիովին յանձնարարելի են և մեծ նշանակութիւն ունին ա-

ռաջին երկուսը։ Խաղերը աւելի ազատ բնոյթ ունին և նպաստում են երեխաների մարմնամասերի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացմանը։ Ընդհանուր վարժութիւններն էլ, որոնք կապուած չեն վտանգների հետ, նոյնպէս մեծ նշանակութիւն ունին՝ թէ ֆիզիքական և թէ բարոյական տեսակէտից։ Միայն գործիքներով վարժութիւններ պիտի անել տալ աւելի սակաւ և գլխաւորապէս ձեռքի գործիքներով։ Կահերով (սպպարատներով) կատարուող վարժութիւնները կապուած են վտանգների հետ և աւելի շուտ ճարպիկ են դարձնում, քան համահաւասար մարզում երեխայի մարմնամասերը։

Փոքրերի համար առանձնապէս օգտակար են մարմնամարզական խաղերն ու ընդհանուր վարժութիւնները։ Վերջինը երկու մասի պիտի բաժանել՝ միակի և շարով վարժութիւններ։

Մարմնամարզութեան դասը պիտի տևէ 25—40 րոպէ և պիտի լինի կամ յետկէսօրեան մեծ դասամիջոցին, կամ առաւօտեան առաջին դասից առաջ։ Լաւագոյնն է բարձրագոյն մի քանի դասարանների աշակերտների հետ միասին պարապել։

ԽՄԲԱԿԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

Երկու սեռի սաներից կազմուած դպրոցական երգեցիկ խումբը պիտի սովորէ Մ. Եկմալեանի պատարագի քառաձայն խառը խմբի համար պատրաստած վարիանտը՝ որոշ հատուածներ վերցնելով միւս վարիանտներից։

Խումբը պիտի սովորէ նաև զանազան աշխարհիկ քառաձայն, երկձայն և այլ երգեր՝ հայկական և գլխաւորապէս եւրոպական մոտիւներով։ Առանձին ուշադրութիւն պիտի դարձնել երեխաների երաժշտական և ընդհանրապէս էսթեթիքական կրթութեան վրայ։ Պէտք է ըմբռնել տալ եւրոպական կտորների մելոդիայի ու հարմոնիայի նրբութիւններն ու մեղմութիւնը։ Հայկական եղանակներից պիտի ընտրել լաւագոյնները (Կոմիտաս վրդ.-ի ներդաշնակութիւններից) և բովանդակութեամբ յարմարագոյնները։ Ժողովրդական երգերի անխտիր և չափից աւելի աւանդումը յաճախ բացասական հետևանք կը տայ։

Երգեցողութեան շաբաթական դասերի թիւը լինելու է 3։

20590
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0055739